

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 43

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

27 ՀԱՏԵՄԲԵՐ 1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՅՈՒՆԻՆԱՆԸ	ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
ԾԱՆՕԹ ԳԵՄՔԵՐ . ՌԵՔԵՍ ՊԵՐՊԵՐԵԱՆ	Գ. ԶՕՀՐԱՊ
ՔԱՌՈՐԴ ԴԱՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ	Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
ԱՇԽԱՐՀԻ ՇՐՋԱՆԸ. «ԽԱՆԱՐԱԿՈՒՆ ԱՎԻԻԿԵ».	ՄԴԷԼԼԱ
ԱՇՆԱՆ ՆՕԹԵՐ. ԱՐԿԻԿԸ	ՄԵՆԱՍԵՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻՆ ՕՐԱՅՈՑԸ	ԽՈՍՐՈՎԻԿ
«ՄԱՏԼԷՆԻ ՄԵՂՔԸ» — ԹԵՐՓԸ	ԹԱՐԳԱՆ. ՏՕՄԻՆՕ

Մասիս շաբաթաթերթի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ՔԱՌՍՈՒՆ ղրԵ. Եւ գնահատելուն համար ՅԻՍՈՒՆ ղրԵ., կանխիկ վճարելի: Արտատպան 12 Ժրանք կամ 5 Բուլլի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ կամ Եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու, Եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահչե-Դաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ Եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն եով:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԻ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԵ

درعليه ده غلطه ده «ماسيس» غرضه مى اداره مى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Կ. Պոլիս, Ղալաթիս, Խորասունկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՏԱՐԵՐԲ ԲՆԱԳԵՏՈՒԹԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Աշխատակրէց՝ Բրոքհուքոր ԱՆԻՔԱՆ ՊԵՃԵԱՆ

Բազմահմուտ հեղինակին տոյն երկը , որ իր տեսակին մէջ լուսագոյն աշխատութիւնն է , ջերմագէտ յանձնարարելի է թէ՛ իրրեւ դասագիրք եւ թէ՛ իրրեւ անհատական ուսումնասիրութեան ծառայող օգտակար գործ մը , բնագիտական հարցերի վեղցիկագէտ պատրաստուած բարձրագոյն պատկերներու օգնութեամբ , եւ հեղինակին յատակ ոճին չնորհիւ , դուրսհանգնելի կը դառնան ամէն դասականի բնիկը ցոյններու :

Գին 8 ՂՐՈՒԴ

Կեդրոնատեղի՝ Յ. ՄԱՏԹԷՍՈՒՆԵԱՆ ԿԱԶՄ.

ՌԱՏՈՒՆ, Ֆիննամեքլար Եօգուշը ,

Կ. Պոլիս

Սոյն երկարութեան հայտատու թըրքերէնն ալ հաստատուած է , նոյնպէս առ իմանայց իսկիւնն , նոյնպէս առ իմանայց օրինակները կը պահուուին Այնթապ , հեղինակի քով :

ԻՒՆԻՐՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000 Քր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000 Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում , որով Իւնիօնի ապահովագրողդ ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսալաբութիւններէն , որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք , որ շահաբաժիններու բարդման (accumulation des b n fices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս , Կալաթա , Թահսապուրուն խան , Օսմ. Պանֆային դիւանք

Դորձակալութիւնք Թուրքիո գլխաւոր քաղաքաց մէջ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884ԻՆ
ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ
ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

Թիւ 85 — Կալաթա, Վոյվոսա փողոց — Թիւ 85

Խիստ խնամով ու տարապայման աժան գիներով չափու վրայ կը պատրաստուին ա-
մէն տեսակ շապիկ, օձիք, թեւնոց, գիշերազգեստ ու ներքին ճերմակեղէններ :

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպաներու զանազանութեամբ
օժտուած սոյն գործարանը տրամադիր է ընդունել ու հատարեալ հոգածութեամբ պատրաս-
տել հարսանեաց ճերմակեղէններու յանձնարարութիւններ :

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիներով
օձիք, թեւնոց, ֆլանէլ, գոյլպայ, թաշկինակ, ոսկեզօծ կոճակներ, փողկապ, դրամա-
պնակ, զմիւր «Չէֆիլտ», խողանակ, սանտր ու անուշահոտութեանց լաւագոյն տեսակներ :

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան, ապրանայ աղնութեան,
յանձնարարութեանց խնամով պատրաստութեան, ու գիներու աժանութեան տեսակէտով
վստահելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուններէն մէկն է :

ԳԻՆԵՐԸ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ

Ա Ր Ի Ս ԵՒ **ԸՆԿ**


ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՐԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱԳԱԼԷ



Վաճառանիչ



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենա-
ներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամե-
նանորը հատեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ :

Տեսակի աղնութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրա-
նաց դէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիներու գերազանց աժանութիւնը :
Փափաքողներուն՝ քաթալօկը ձրի կը զրկուի :

Մեծաքանակ գնում ընել ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔ
ԵՒ Կ. ԻՆՃԻՃԻԵԱՆ ՈՐԴԻԹ վաճառատունները, իսկ գաւառներու եւ օտար երկիր-
ներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմոյշներու
ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով :

ԲԱՐԻՋ — ՊՊ Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռի-
Շաքուռեռ :

ՊՈՄՊԱՑ — ՊՊ. Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔԱՆԳՐԻԱ. — Պ. Մ. Գալֆանեան

ԳԱՀԻՐԷ. — Պ. Հ. Ռոզանբալ :

ՌՈՒՍՃՈՒԳ. — Պ. Կ. Ինճիճեան որդիք :

ՎԱՌՆԱ. — Պ. Կեռոն Արտիթի :

ԻՋՄԻՏ. — Պ. Յակոբ Մոմճեան

ԶՄԻՒՌՆԻԱ. — Պ. Հայնրիխ Վառնինկ :

ՍԵԼԱՆԻԿ. — Պ. Տինօ Ֆերնանտեզ :

ԻԻՍԿԻԹ. — Պ. Մ. Բալուանօ :

ՊԷՏՐՈՒԹ. — Պ. Ֆրանքել Շիֆֆներ :

ՍԱՄՍՈՆ. — Պ. Պ. Պետրոսեան Եղարք

ՏՐԱՊԻՋՈՆ. — Պ. Արիս Կ. Ինճիճեան :

ՍԵԲԱՍՏԻԱ. — Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան

ՌՈՏՈՍԹՈ. — Պ. Յակոբ Բոսփատալ

1902

ԹՈՒՐԲԵՐԷՆ, ՀԱՅԵՐԷՆ, ՖՐԱՆՍԵՐԷՆ ԵՒ ՅՈՒՆԱՐԷՆ ԼԵՋՈՒԱՐ

ՕՐԱՅՈՅՑ-ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Չ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, Պայպը Հառոգ, Կ. Պոլիս

Կը գտնուի Պոլսոյ եւ Գաւառաց բոլոր Գրավաճառներու

եւ Թղթավաճառներու հոյ

ՄԵՆՍԱՔԱՆԱԿ ԳՆՈՂՆԵՐՈՒ ԳՈՀԱՅՈՒՅԻՉ ԶԵՂՉ

Ոսկեգոծ փառակազմ 8 Ղր.

Պարզ կազմ 3 Ղր.

Ընթեր լաթակազմ 5 Ղր.

ՏՈՒՐԲ. Վ. Մ. Թ. ՆԻՆԴԵԱՆ

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

Բերա, Սիրք s'Այեք, աքարք. Նո. 3

Ամէն օր կէս օրէ վերջ, Վիրաբուժական եւ Արուեստական ամէն տեսակ աշխատութիւններ՝ ամենավերջին նրբութեանց պահանջմանց համաձայն :

Գշ. եշ. եւ Շք. առաւօտները ԶԱՐԻՖԵԱՆ Դեղարան ի Դուռ-Դարառ :

ՏՈՒՐԲ. ԳՐԻԳՈՐ ՃԵԼԱԼ, նախկին *եֆայեռն* եւ *եմդեռն* Բարիգի հիւանդանոցներուն, եւ շօտրամով պատուուած Assistance Publiqueի կողմէ : 14 տարի Բարիգ անցունելէ ետք, որուն 6 տարին իբրեւ բժիշկ, մայրաքաղաքս հաստատուած է : ՏՈՒՐԲ. Գ. ՃԵԼԱԼ կը դարմանէ, բացի ընդհանուր հիւանդութիւններէ, մասնաւորապէս *ջղային* եւ *մորթային* հիւանդութիւններ : Ամէն օր, չորեքշաբթիէ զատ, կես օրէ վերջ հիւանդ կընդունի իր տունը՝ Բերա, Սազրգ Աղան, Բ. 39 : Ներկուաբթի, չորեքշաբթի եւ ուրբաք առաւօտները՝ Սամաքիա, Բրիսեան դեղաւանին կից տունը :

7-30

ԶՄԵՌՆԱՄՈՒՏԻ ԱՌԹԻԻ՝ Կալաթա, Վոյվոտա փողոց թիւ 85 Մ. Տէր Դաւիթեան չափիկի հանրածանօթ վաճառատունը եւրոպայի լաւագոյն գործարաններէն բերել տուած է ընտիր տեսակ ֆլանէլ, գուլպայ, թաշկինակ, հովանոց, օձիք, թեւնոց եւ բոլորովին նոր դրութեամբ ու խիստ ճաշակաւոր դրամապնակ, փողկապ, կոճակ, զմելի. եւ առաւելահաստութիւններ : Գիները չափազանց աժան ու մատակարարուած ապրանքները միշտ տակուն ու սիրուն են :

Տէր Դաւիթեան չափիկի գործարանը ի մասնաւորի կը զբաղի չափու վրայ պատրաստել ամէն տեսակ չափիկ : Դիշերազգեստ ու ներքին ձէրմակեղինաց յանձնարարութիւններ : Հանդիստ ու տակուն չափիկ հագնիլ փափաքողները թո՛ղ դիմեն սոյն վաճառատունը որ երկարատեւ փորձառութեամբ վստահութեան ամէն իրաւունք կը վայելէ :

Հարսանեկան ճեմակեղինաց համար վերջին նորաձեւութեամբ օժտուած մասնաւոր ճիւղ մը հաստատուած է : Յանձնարարութիւնները խնամով ու արագ կը պատրաստուին ու գինները որոշ են :

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ կազմասան եւ սպաւանին համար բանի մը վարժ ԿԱԶՄԱՐԱՐԻ եւ ԳՐԱՇԱՐԻ պէտք կայ : Դիմել յիշեալ Հաստատութիւնը, Կ. Պոլիս, Ֆինանսեր, Թ. 27 :

ՄԱՍԻՍ

50^{րդ} ՏԱՐԻ

— 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901 —

ԹԻԻ 43

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՅՈՐԵԼԵԱՆԸ

— 3 —

Օգոստ. Սուրբանին Կայսերական բարձր հովանիին ներքև հիմնուած ու զարգացած կրթական անհամար հաստատութեանց մէկն է նաև Պէրպէրեան վարժարանը որուն հաստատման քսանըհինգամեակը կը տօնուի վաղը, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր:

Ազգին ամէն դասակարգերուն կողմէ համակրանքով ողջունուած այս կրթական յոբելեանը, որ կը նուիրագործէ բազմարդիւն դաստիարակի մը քսանըհինգ տարուան պարկեշտ և ուղղամիտ գործունէութիւնը, ու կրթական ասպարէզին մէջ անոր յարատեւութեան ոգին, միանգամայն գրական յոբելեան մըն է, — յարգելի յոբելեարը նոյնքան ծանօթ և գնահատուած ըլլալով իր երկասիրութիւններովը որքան դասախօսութիւններովը:

Թէ՛ իբրև դաստիարակ և թէ՛ իբրև գրագէտ՝ Պէրպէրեան էֆ.ն միշտ օգտակարին հետամուտ եղած է, մէկ կողմէ հեղինակութեանց ու թարգմանութեանց միջոցաւ դէպի բարին, ճշմարիտն ու գեղեցիկը առաջնորդելով՝ հասնող սերունդներուն միտքն ու հոգին, և միւս կողմէ նոյն ուղղութեամբ դաստիարակելով իր խնամոց յանձնուած ուսանողները: Այս կրկնակ տեսակէտներով, անխտիր համակրանք ու յարգանք գրաւած է որոնց հաւաքական տրտայախումն է վաղուան յոբելեանը:

Դեռ վերջերս բերկրութեամբ ծանուցինք թէ Վեհ. Սուրբանը բարեհաճած է Գ. կարգի Մէծիօրիյէ պատուանշան շնորհել Պէրպէրեան էֆ.ին: Կայսերական գնահատման այս բարձր հաւաստիքէն խրախուսուած՝ Պէրպէրեան վարժարանի Հիմնադիր-Տնօրէնը նոր եռանդով մը առաջ կը վարէ իր օգտաշատ հաստատութիւնը, բոլորանուէր փարած անոր: Եւ իր նախկին սաներուն յղացած գեղեցիկ խորհուրդը — որոնք ուղեցին նոր շէնքով մը օժտել Պէրպէրեան վարժարանը, անոր քսանըհինգամեակին առթիւ ըլլալիք նուիրատուութիւններով, — Ս. Պատրիարք Հօր և Ազգ. վարչութեան վաւելացմամբ ի գլուխ ելլելով, համակիրներուն ինքնաբեր նուէրներովը, բարոյական վարձատրութեան կու գայ միացնել նաև նիւթականը, ինչ որ նոր խրախոյս մը պիտի ըլլայ յարգելի յոբելեարին:

Մասիսի խմբագրութիւնը, ձայնակցելով ազգ. բոլոր թերթերուն՝ որոնք

խնդակցական էջեր կը նուիրեն այսօր Պէրպէրեան էֆին, իր հրապարակային ջերմ շնորհաւորութիւնները կ'ողղէ մեծայարգ Դաստիարակ-Գրագէտին որուն նուիրուած Ծանօթ դէմք մը, Գ. Զօհրապի կողմէ, գրական տեսակէտով՝ արժանաւոր մեծարանք մը կ'ընծայէ ։

Յանձին Ռէթէոս էֆ. Պէրպէրեանի կը տեսնենք ո՛չ միայն դաստիարակը և դպրոցի վարիչը, այլև գրագէտը որուն աշխատակցութիւնը վայելելու պատիւը ունեցած է և կուենայ Մասիս : Ու այս տեսակէտով ալ, ջերմագին ու յարգաւոր ողջոյն մը կ'ողղենք իրեն, իբրև գրական երէց եղբայրակցի մը ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

Ծ Ա Ն Օ Թ Դ Է Մ Ք Ե Ր

ՌԷԹԷՈՍ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ճառագայթող երես մը՝ պայծառ խղճմունքի ցողացումով . գեղեցիկ խարտեաչ գլուխ մը, երիտասարդի գլուխ, միշտ վեր բռնուած, հակառակ մտաւորական անընդհատ ու ծանր վաստակի մը ու, կարծես, ճիշդ այդ վաստակովը առուզացած . հասակը ոչ մեծ և ոչ փոքր, իր պարտականութեանը, իր բովանդակ պարտականութեանը մէջ ամփոփուած մարդու հասակ ։

Այս ամէնը սակայն խորխտ բան մը ունի որ անմասն չէ արդար հպարտութենէ մը և որուն համար անձանթ մը՝ իրեն մօտը երթալու պիտի վարանէր իրաւամբ ։ Ապաքէն իր մտերմութեան շրջանակը անձուկ եղած է միշտ, և չափազանցութիւն մը չէ պընդելը որ ոչ ոք մուտք ունեցած է հոն ։

Այս առանձնութիւնը հաճելի է իրեն . անկէ, այդ բարձունքէն կը դիտէ, տարիներու հոլովումին հետ, անցքը, անգուլ անցքը իրերուն ու մարդերուն, յարափոփոխ, չահեկան, ու մշտնջենական տեսարանը՝ անակնկալով, ահաւորով, ծիծաղելիով, զմայլելիով լեցուն որուն թերեւս ատեն ատեն սրանդուլութեամբ կը հեռուի, բայց զոր չի դադրիր ուշադրութեամբ ուսումնասիրելէ ։

Մեր ազգին կրթութեան հոյակապ վաստակաւորն է ան . իր դաստիարակութեան գործը պարզապէս հիանալի է . կոչումի ու անձնութեան գործ, որ քահանայութենէ աւելի սուրբ է և վարդապետութենէ աւելի հմտութեան կը կարօտի . ինքն իր գըլխուն հիմնելով, պահելով, վարդապետելով կրթական հաստատութիւն մը զոր ազգին բոլոր հարուստները ու աղաները մէկտեղ հաւաքուած՝ անկարող էին կանգուն պահել . ինքը մէկ հոգի՝ աւելի շատ աղքատ ու կարօտ տղոց նիւթական ու մտաւորական սնունդ տուած, մեծցուցած է զանոնք քան թէ ու է հարուստը մեր ազգին, և այս ամէնը լռութեան ու համեմատութեան քօղին տակ՝ հըռչակուած ողորմութեանց ճիշդ գէմը . ի՞նչ մեծ դաս ։

Արդար է ուրեմն որ իր հիմնած վարժարանը իր անուշովը և ինքն ալ իր վարժարանովը պարծենայ ։

Իր տուած կրթութիւնը նիւթապաշտ ձգտումը չէ, զոր ամէն բարձրագոյն իտեալի վտարումէն կը ձեւացնեն ոմանք, այնքան ջատագովուած, գրեթէ դրուատուած այսօր . այլ նկարագրիր կազմող դաստիարակութիւնը, որ Օգտակարին ետեւէն վազելու ատեն գիտէ ձգտարտին քով ալ կանգ առնել ու Գեղեց-

կին առջեւ կորսնցուցած վայրկեաններուն համար չափոտար :

Այս կրթութիւնը ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ արգէն , քանի որ ջերմ հաւատացեալ մըն է ինքը , որ մարգարէի մը վայելուչ մթաքօղ լեզուով մը գրի առած է Լամբնէի մուսլ ու մութ պատգամները , որոնք կարծես ստորերկրեայ եկեղեցիէ մը կուգան , անոր հաստ ու խուլ պատերը ճեղքելով կը հասնին մինչեւ մեզի : Ի՞նչ բանի հաւատացող սակայն . ասիկայ չի պիտի կրնար որոշ կերպով ըսել մեզի . հաւատացող մը՝ որ մարդս վայելելու համար չի դար աշխարհ , այլ պարտք մը կատարելու , քաղելէ աւելի հերկելու համար . անձնութեան հաւատացող մը ուրեմն , հաւատքներուն գերագոյնը :

* * *

Խորհող մը , իմաստասէր մըն է ինքը . ոչ անոնցմէ որոնք վայրապար գեգերանքներու մէջ մոլորած՝ ամէն օրուան ճամբան կը կորսնցնեն . իր իմաստասիրութիւնը գիտէ սակաւատեւ կեանքէն մարդու՝ շատ բան չի պահանջել ու քիչով դոհանալ , որովհետեւ գիտէ որ աչքք բացած գոցած պահուգ ահա օրը իրիկուն կ'ըլլայ . իրաւունք ունի ուրեմն չարճամարհելու ամենաջնջին բարեխառութիւնը զոր կեանքը կրնայ պարգեւել :

Կեանքի պատահարներու դաժան հպուռմէն , անոնց ատեն ատեն մարդուս ուսին վրայ նետած ցուրտ վերարկուէն սարսուռ դգացած է հարկաւ երբեմն բանաստեղծի հոգին որ իր ներսը կը բնակի . բայց լքումի ու վհատութեան անմատչելի է իր սիրտը . յետոյ օրն ի բուն մանկութեան , պատանութեան հետ ապրող այս մարդը , ատով իսկ , սպազային կը նայի ամէն ատեն . անոր հետ մտերիմ ու ծանօթ է ալ , քառորդ դարի մը տեւողութեամբ հաստատուած անխափան մտերմութիւն , ամէնէն պատուաբերն այս առանձնասէրին համար :

* * *

Գրագէտ . է արդարեւ . հրապարակագիր . ամէն ատեն . իր տարազը պարզու-

թեան , վայելչութեան , ճկունութեան տարազն է . չլացնելէ աւելի համոզելու կը միտի . իր ակնկալութիւնը դրուատիք ունենալէ աւելի իրաւունք ունենալու մէջ կը կայանայ . գոյներու , երանգներու շլացումովը չի յոգնիր իր վրձինը . բայց մատիտը իր գիծերուն ճշգրտութեամբը անհաւասարելի է , ինչ որ որքան նկարչին նոյնքան գրագէտին խղճմտութեանը եւ պարկեշտութեանը ապացոյցն է :

Իր սեռը , տարիքի բերմունքով թէ ուրիշ պատճառով մը չեմ գիտեր , fantaisieէն կը խորշի միշտ . իր գրութեանը լուրջ ու հիւսթեղ է : Յետոյ , իր դաւանանքը գրականութեան մէջ նոյնն է ինչ որ էր կեանքի ըմբռնումին համար . արշաւի մարդը չէ ինքը , ոչ իսկ աճապարանքի . ասոր համար է որ իր դրած լեզուն , տարիներու ընթացքին մէջ՝ ոտքէն մինչեւ գլուխը մերկացած ըլլալով հանգերձ գրաբարի շքեղ գլղլեւակը , դեռ բոլորովին մեր աշխարհաբարը չէ եղած . բաճկունը պակաս չէ , ոչ ալ շապիկը . բայց բան մը , զոր ստուգիւ չեմ կրնար ճշգրէ՝ պակաս է վերջապէս անոր վրայ : Ասիկայ սակայն իմ փոյթն չէ բնաւ եւ չի նուազեցնէր իր գրագէտի արժանիքը : Իմ մասին չեմ ներկր որ մէկը դէմս ելլէ ու գրած լեզուիս չի հաւնի . գրականութեան մէջ լեզուի թոյլտուութիւնը՝ անոնց համար որոնց ուղած ձեռով այդ լեզուն գրելու կարողութիւնը վէճի տակ չէ , այն թոյլտուութիւններէն մէկն է , զոր Ժիւլ Սիմօնի մէկ խօսքը փոխ առնելով հոս , « անհրաժեշտ » պիտի կոչեմ . ուստի արդար է որ ես ալ չի միջամտեմ ուրիշի մը գրելու եղանակին , գրեւակերպին , քանի որ յետագէտ մը չի սեպուելու համար անպատճառ հարկ է որ ես ալ քայլ մը առնեմ դէպ յ յառաջ :

Գաղափարներու աշխարհին մէջ շատ հեղ տարակարծիք դառնում ենք իրարու քսան տարիներէ ի վեր , յորմէհետէ հոս հոն կը հանգստանա իրարու մամուլի միջոցով : Féministe մըն էր ան արդէն Մայքսան պաշտպանելով իմ յարձակումներուս դէմ երբոր ես իմ արեւելքցիի յամառութեամբս այդ դատին դէմ կը մաքատէի եւ դեռ կը մաքատիմ , հա-

մոզուած՝ որ ատուլ կինը կը կորսնցնէ քան թէ կը շահի իր չնորհին մէջ որ իր կոչումն է . եսասէրի , կնասէրի համոզում պիտի ըսէք ինծի եւ իրաւունք պիտի ունենաք :

* * *

Քիչեր մեր մէջ կը հաւատարին իրեն հըմտութիւնով , որ շարունակ կարգալով , վերածանելով ձեռք բերուած է : Զարմանք որ այս ընթերցումի մղութիւնը չէ վնասած իւրենս ես կը կարծեմ որ կարգացուած գիրք մը մոռցուելու է . կը վախնամ որ դարձեալ ծանր ճշմարտագանցութիւն մը ըսած չըլլամ առաջ նետելով այս գաղափարը որ , ամչնալով կը խոտաւորանիմ թէ , իմ էն սիրած դաղափարներէս մէկն է . ասոր համար է արդեօք որ այն սուղ վայրկեաններուս մէջ զոր ընթերցանութեան կը յատկացնեմ , ակնարկ մը կը նետեմ ու կ'անցնիմ գրքի էջերուն վրայէն , դանտեք աւելի աչքէ անցուցած ըլլալու քան թէ անոնցիւ բան մը յիշելու նպատակով :

Զօրուոր իմացականութիւնները , որպէս է այս գրագէտինը , կ'օգտուին գուցէ ուշագրութեամբ հետեւելով հեղինակին , բայց չի՞ դար ատեն մը որ միտքը աւելի յիշելու քան թէ խորհելու ծալքը առնէ . կամ միտք պահուած ամէն նիւթի համար գնելու տեղ չի մնայ յիշողութեան մէջ եւ կամ այդ բոլորը խնամով կարդով հոն գետեղելը դժուարանայ , անթիւ հատորներով առլցուած մատենադարանի մը պէս :

Կրթութեան , դատարարականութեան կենսական հարցերը իր ամէն ժամու որոճումներուն նիւթերը եւ իր մեծ հեղինակութեան ենթականերն են , որուն իր շատ մը առիթներով արտասանած բանախօսութիւնները կը վկայեն . ու հոս է որ ահա դատարարակը , խորհողը ու գրագէտը ձեռք ձեռքի կուտան կը միանան , կազմելու համար մեր ժամանակին ամէնէն նշանաւոր դէմքերէն մին որ Պէրպէրեանն է :

* * *

Ապագան . բայց ապագան հիմակուրնէ չնորհուած է այս բաղդաւոր ու միանգամայն արժանաւորին . անմահութեան մէջ մանկ կենդանութեան ատենէն . այս առատպիլային ու շքեղ ձակատագիրը այսօրուրնէ իրենն է :

Գ. ԶՅՈՂԱՊ

Յառաջիկայ կիրակի , Հոկտ. 28 , եւ Տօն Գիտի Ս. Խաչի , Ամեն Ս. Պատրիարք Հայրը պիտի պատարագէ Ս. Խաչի եկեղեցին , եւ Պէրպէրեան Վարժարանի Քսենոֆոնեան կին առթիւ հոգեհանգիստ պիտի կատարուի վասն հանգուցեալ ծնողաց եւ ամուսնոյն Հիմնադրի նոյն վարժարանին , Ժամերգութիւնը պիտի սկսի առտուան ժամ 1ին . Քարոզը պիտի խօսուի Պատարագէն վերջի ժամ իրր 5 : Իսկ չնորհաւորութիւնք պիտի ընդունուին յիշեալ Վարժարանին մէջ ի ժամ 8 :

Ի դիմաց Յանձնաժողովոյ

Քսենոֆոնեան կին

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ Գ. ՖԷՐԱՏԵԱՆ

Սկիւտար , 25 Հոկտ. 1901 .

Ս. Պատրիարք Հայր , որ կը նախագահէ Պէրպէրեան Յորեւանի Մասնախումբին եւ գրական նպատակ մըն ալ մասնակցած է արդէն նուիրատուութեան , իր մեծադիր ընտանկարը զրկեց յարգելի յորեւարին՝ սա ինքնագիր Զօնով .

Առ սիրելի մեր եւ այր արժանի յարգանաց՝ Ռեքեոս Պերպէրեան՝ Հայր Զարգացելոց , ի յիշատակ քանեւհինգերորդ տարեդարձի իւրակեհ եւ բազմօգուտ ուսումնարանին ի Ռ. Պ. Հ. Զ.

Օրհնութեամբ եւ բարեմաղթանքով

ՊԱՏՐԻԱՐԿ Կ ՊԱՆՈՅ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պէրպէրեան Յորեւանին առթիւ եղած բոլոր նուիրատուութեանց ցուցակը՝ գեղակերտ աղպով մը մէջ ամփոփուած , — զոր պատրաստած է ծանօթ գեղագիր Խաչիկ ԼՓ. Թահմաճեան , — վաղը պիտի յանձնուի Պէրպէրեան էֆէնդին որ նոյնպէս պիտի ստանայ , Ս. Պատրիարք Հօր ձեռամբ , նուիրատուութեանց գումարին համապատասխանող չէք մը :

Հաճութեամբ կը ծանուցանենք թէ Ծաղիկ օրաթերթը , կարճատեւ գաղարումէ մը ետք , վերսկսաւ հրատարակուիլ արածնութեամբ Տպագրական Վերատեսչութեան :

ՔԱՌՈՐԴ ԴԱՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Մասիսի քնքերցողները մասնաւոր հանոյժով պիտի կարդան ինքնագիր գրուածք մը Պերպէրեան Էֆենտիէն՝ իր Յոքելեանին նուիրուած քիւին մէջ իսկ : Մսածեցինք քե ոչ ոք իրեն պէս նեղրօրէն պիտի կրնար գաղափար մը տալ իր վարժարանին հաստատման պարագաներուն վրայ, քան ինչոք տարի առաջուան յիշատակները բերելով : Ու այս նպատակով իրեն դիմեցինք գրաւորապէս : Պերպէրեան Էֆ.ն բարեհաճութիւն ունեցաւ, հակառակ իր ծանր զբաղումներուն, չի մերժել մեր խնդիրքը եւ Մասիսի խմբագրութեան հրատարակման պատասխանել նամակաձեւ յօդուածով մը որ յարգելի յօքելեանին կեանքին մէկ էջը կը պատկերացնէ՝ իր զգայուն տողերուն մէջ :

Տ. Ա.

Մեծայարգ եւ սիրելի Խմբագրապետ,

Ձեր նամակաւ կ'ուզէք որ Մասիսին համար ի գիր տանուեմ Պէրպէրեան վարժարանի բացման պարագաները՝ 25 տարի առաջները երթալով իմ յիշատակներուս մէջ։ Ձեր համակրայից առաջարկին պատասխանել կը փութամ, թէ եւ հարկ ըլլայ ինձ գուցէ կրկնել, գէթ մասամբ, ինչ որ դեռ երէկ իրագրելի բարեկամ զրիչ մը կը յիշեցնէր Բիւզանդիոնի մէջ : Գառքիւզ, Լատին Եկեղեցւոյ փողոցին ծայրը, միջակ մեծութեամբ տան մը մէջ կը հիմնուէր Պէրպէրեան վարժարանը, ըսին ու անձայն կերպով : 1876 տարւոյն դպրոցական արձակուրդի ամիսներուն մէջ, ու Սեպտեմբերին ալ, անդուռ ու կատարի պայքար մը մղած էր նիւթական հագար ու մէկ դժուարութեանց դէմ՝ հասնելէ յառաջ Հոկտեմբեր 1 թուականին, ուր դասերու սկզբնաւորութիւնն ազգարարող առաջին զանգակն հնչուեցաւ Պէրպէրեան դպրոցին : Առաջին դժուարութիւններն հարթուելուն եւ վարձուած տան պայմանագրութիւնը կնքուելուն պէս՝ թոած գացած էր Մանգումիի եւ Մասիսի խմբագրատունները, բացման Ազգերը հրատարակութեան տալու : Կանխաւ խոստացուած մի քանի սակաւութիւն աշակերտներ ներկայ էին Հոկտեմբեր 1ի առաւօտուն, երբ մի քանի ուսուցիչներով վեր սրահը ելանք դասերն սկսելու : Տունը, որ այժմ այրած է ու տեղն աւերակ մնացած, երկու յարկ ունէր երեքական սենեակով, առաջին յարկը՝ բաւական ընդարձակ սրահով մը՝ դասասուրճեանց յատկացուցեր էր, ու երկրորդ յարկը՝

ննջարանի, մէկ սենեակն ինձ մասնաւորելով իրեն աշխատելու ու նշնելու սենեակ, Գետնայարկին վրայ երկու սենեակներ կային, մին խօսարան ըրած էր, եւ միւսը՝ ճաշարան : Փոքրիկ պարտէզ մ'ալ ունէր այդ շէնքը : Կը յիշեմ որ առաւօտուն այդ խօսարանին մէջ ժողովուեցան մէկ քանին այն ուսուցիչներէն, հայ թէ եւրոպացի, որք յանձնառու եղած էին պաշտօնավարել վարժարանիս մէջ, անշուշտ ի սկզբան բազմապահանջ ջրլալու եւ նոյն իսկ վճարման մասին համարձակութիւններով : Հաճախեալ հաճախեալութեամբ : Կային նաեւ, կարծեմ, մէկ երկու ծնողք : Հոն եղաւ բացումը քանի մը պարզ ու դողդաջ խօսքերով՝ զորս արտասանեցի. լաւ չեմ յիշեր ըսած խօսքերս, բայց անշուշտ սրտազին նուիրում մը կը խոստանային սկսուած գործին, ու մանաւանդ երկնից օգնութիւնը կը հայցէին անոր յաջողութեան համար : Անկէց ետքն էր որ, ինչպէս ըսի, վեր ելանք դասասուրճեանց սկիզբն ընելու :

Մեր առաջին աշակերտները գիւղին Արամեան վարժարանէն բաժնուելով եկան մեզի, որոց մէկ քանին բարձրագոյն կարգէն. այս վերջնոց հետ միացան դեռ նոր փակուած Շահնազարեանի քանի մը սաներ ու կազմեցին Դ. Դասարանը : Ասոնցմէ երեքը յաջորդ տարւոյ վերջն աւարտելով իրենց չքանք՝ եղան մեր անդրանիկ պատկաւորները : Այսպէս տարի առ տարի չէր որ կազմեցինք մեր դասարանները. նոյնպէս առաջին օրէն բաւական ընդարձակ ծրագիր մը գործադրութեան գրինք՝ ուսուցիչներու բաւական մեծ թուով մը : Առաջին տարուան մէջ Գ. Զաքարեան՝

Ուսողութեան , Ի. Մուրաթեան՝ Բնական գիտութեանց , Ա. Գարամաթեան՝ օսմաներէնի , Յ. Սեթեան՝ Փրանսերէն-հայերէնի , Մ. Ռու՝ Փրանսերէնի , Չարլս Ռոպէրզս՝ անգլիարէնի , Ֆէրաինանտ Ֆիլիք՝ գերմաներէնի , Մ. Տիրացուեան՝ գծագրութեան , Ն. Թաշճեան՝ երաժշտութեան , Ս. Սուրէնեան՝ դաշնակի դասեր աւանդած են , բաց ի ընդհ. հսկողութեան եւ օգնական-ուսուցչութեան պաշտօն վարող մի քանի այլ անձերէ ու Տնօրէնէն որ ստանձնած էր հայ եւ Փրանսերէն լեզուաց , գրագիտութեան , ընդհանուր եւ մատենագրական պատմութեանց դասեր : Ինչպէս կ'ապահովէր ուսուցչաց թոշակներուն վճարումը , ո՛րչափ ալ ի սկզբան համեստ եղած ըլլային իրենց պահանջումներ : Հոկտեմբեր 1ին երկու գիշերօթիկներ արձանագրուած էին . Լեւոն Պ. Ֆնտզլեան եւ Համբարձում Այնտճեան (Շապին Գարահիսարցի) . ասոնց թիւը 7ի հասած էր 1877 մայիսին : Նոյնպէս սակաւաթիւ էին արտաքինք . եւ առաջին դպրոցական տարին վերջացած պահուն՝ ընդամենը , ներքին թէ՛ արտաքին , 28 աշակերտ ունեցած ենք : Երկրորդ տարւոյն վերջը , ուր մեր առաջին չորս շանաւարտներն ունեցանք , ընդհանուր աշակերտաց թիւն հասած է 37ի , որոց 19ը գիշերօթիկ : Այս պայմաններուն մէջ կը հասկըցուի առաջին քայլերուն անհնարին դժուարութիւնը : Ստիպուած էի դպրոցական օրէն յետոյ մասնաւոր դասերու վազել , որոց մէջ բաւական թուով ունէի՝ Գառըգիւղի առաջնակարգ ընտանիքներու մէջ , ու ոմանց ալ գիշեր կ'երթայի : Բայց ա'լ դպրոցի դասեր չունէի . ցերեկն ամբողջ աշակերտներուս կը պահէի , թողուցի իսկ Ֆռէսներու վարժարանին մէջ ունեցած դաս : Այս մասնաւոր դասերէս առած վարձքս բաւական նպաստ մ'էր ինձ դպրոցական ծախսուց համար : Պէտք է որ շնորհակալութեամբ յիշեմ հոս Ֆնտզլեան բարեյիշատակ Պետրոս էֆէնտին , որ հաճած էր դպրոցատան 70 ոսկի տարեկան վարձքին երաշխատուր ըլլալու — 12 ոսկուց կանխավճար մ'ըրած էի Արամեանէն ստացած վերջին երկու ամսականներովս — , եւ որ առաջին մէկ երկու մասնավճարներն ըրաւ՝ հաշուակցելով յետոյ մեզ հետ , վստիքի մեզ յանձնած էր

իր երեք մանչ զաւակներն ու տանը մէջ կը գասախօսէի իր աղջկան : Նաեւ պէտք է որ յիշեմ Եօզղատցի Յակոբ աղա անուն բաւական ունեւոր ատաղձագործ մը , որ ապառիկ շինած էր իր 40 ոսկուց արժէքով դասեղան , գրատախտակ , ամպիոն , ճաշասեղան :

Հետաքրքրական է աչքէ անցունել , մեր դպրոցական արձանագրութեանց հին տուժարներուն մէջ , առաջին տարիներու ամսվերջի քննութեանց առեւն քննիչներու-տարեկից ու երէց պաշտօնակիցներու եւ այլ ուսումնական անձերու-գրաւոր վկայութիւնները , ըստ սովորութեան մը որ կար այն ատենները եւ զոր մեր չորրորդ տարին վերցուցինք մեզ համար : Բայց անշուշտ այն սկզբնական տարիներուն մէջ շատ քաջալերիչ եղած են մեզ ձեռնհասներու գոհունակութեան վկայութիւնները : Այդ արձանագրութեանց մէջ այսօր անհետացած զէմքերու ձեռագրերը կան , Սրտանձտեանց Գարեգին վարդապետի , Ս. Պ. Պ. Փափաղեանի , Եղիազար Մուրաթեանի , Սիմոն Միքայէլեանի : Թո՛ղ ներուի յառաջ բերել այս վերջնոյն , որ Ուսողութեան ուսուցիչս եղած էր Նէթախեան վարժարանի մէջ , ստեղծ համառօտ ու պարզ վկայութիւնը , որուն մէջ հօր մը ձայնը կը կարծեմ լսել որ մեծութիւն կը գուշակէ իր զաւակին գործին մէջ եւ այդու կը յուսադրէ ու կը խրախուսէ : «Բանակագիտութեան քննութեան ներկայ «գտնուելով՝ գոհ եւ ուրախ եղայ աշակերտաց պատասխաններէն , եւ քիչ ժամանակէն կը յուսացուի որ առաջին կարգի դրպորոց պիտի ըլլայ : Ս. Միքայէլեան . 77 յուլիս 19» : Հետի՛ յինէն առաջին կարգի բաւերուն պատուասիրական ու քաջալերական չափազանցութենէ տարրեր իմաստ մ'ընծայելու յաւակնութիւնը , բայց նայելով այսօրեայ 25ամեայ քիչ թէ շատ յաջողակ յարատեւութեանը գործոյն զոր նա դեռ իր որդանին մէջ կը դիտէր՝ թուան մը կենսականութեանը վրայ պապու մը յայտնած վստահալից եւ ցնծալից նախատեսող ներշնչմանը պէս լսան մը տեսնել կը փորձուիմ այդ տողերուն մէջ՝ գրուած ձեռքէ մը զոր , աւա՛ղ , մահն ընդհուպ պիտի դուռնցնէր , եւ կը յուզուիմ :

Դպրոցական Գ. Տարւոյն (1878-79) սկիզբ-

ները մեր գիշերօթիկ աշակերտաց թիւը սկը-
սաւ շուտով աճիլ: Նոյեմբերի մէջ արդէն 25ը
անցած էր ու երթալով յաւելնալ կը խոստա-
նար: Ընդարձակագոյն յարմար չէնք մի գրա-
նել Գատրգիւղի մէջ կարելի չէր երեւեր.
ուստի ստիպուեցայ թողուլ Գատրգիւղը եւ
անցնիլ Խոկիտար: Գատրգիւղցի ծնողքներ
չառ ստիպեցին զիս մնալ ու բաւականանալ
այդքան աշակերտով: Երկուդ ալ կը յայտնէին
որ մեծագոյն թիւ մ'աշակերտաց գուցէ դրժ-
ուարութեանց մատնէր զիս ու անկարողա-
նայի վարել ըստմտականաւ զործ մը: Չ'ան-
սացի, փորագրուեցայ Իւսկիւտար (Իճառիյէ)
ուր ընդարձակագոյն ասպարէզ մի գտայ.
գիշերօթիկներու թուոյն հետ արտաքիններու
թիւն ալ շատցաւ շուտով: Տարւոյն վերջը 50
եղած էին գիշերօթիկները, ու Դ. տարեջր-
ջանը արդի չէնքին մէջ (Սէլամսըզ) սկսանք.
Նոյն իսկ այդ տարեջրջանի առաջին ամիսնե-
րուն պարտաւորուեցայ վարձել մեր դրացի
Օսեանց ընդարձակ տունն ալ, այժմ՝ Ամե-
րիկեան Հոմին միացած, իբրեւ ննջարան
միայն գործածելու համար, ա'յնքան մեծ էր
հասանքը գիշերօթիկներու, աւելի՛ քան ութ-
սուն: Այս հասանքը չը շարունակուեցաւ սա-
կայն, նուազեցաւ իսկ տպաւ, հարկ եղաւ ինձ
յաջորդ տարին ամիսօրուիլ արդի տան մէջ:
Ու հոն ենք քսան եւ մէկ տարիներէ ի վեր,
եղեւէջներ ունենալով թէպէտ նիւթական
յաջողութեան մասին, այլ անընդհատ յա-
րատելութեամբ գործոյն:

Գատրգիւղէն բաժանումը, սակայն, բա-
ւական ցաւագին եղաւ սրտիս: Խաղաղութիւն
հոն փոխադրուած 1872ի վերջերէն ի վեր՝ 6
տարի ընակած էի այդ թաղին մէջ, ու շատ
սիրած էի զայն: Հոն կանուխէն աշխատիլ
սկսած էի կրթական գործին, աշակերտներ
հասուցած սրտցմէ փայլեցան Միհրան Ասքա-
նազ եւ Յարութիւն Դիմաքսեան: Համակիր-
ներու շրջանակ մը կազմած էի իսկ հոն, եւ
իբր ծննդավայր մի ընտանի եղած էր ինձ,
Բուր փողոցները ծանօթ էին ինձ, եւ մանու-
ւանդ բոլոր ծովեղերքները՝ որոց վրայ թա-
ւառած էի սրտի թաքմ գգացումներով: Շքեղ
վերջալոյսներու հանդէպ քանի'ցս անյագ կանգ
առած էի երկար, ու Մօտայի հրուանդանին

ծայրէն ո՛րչափ անգամներ յափշտակուած
ընկղմած էի՝ երազալից՝ կապոյտ անհունու-
թեան մէջ զոր ծովը կը պատկերէր, կամ ե-
րեկոյի ստուերներուն մէջէն դէպ ի Ֆէնէս-
Պաղէի փարտը մազնիւտեամ, ժամերով ան-
չարժ: Իւսկիւտար փոխադրութեան առաջին
ամիսներուն մէջ պարզապէս ծովուն հայրե-
նաբաղձութիւնն ունէի. սանահատ տղու մը
պէս դժբաղդ կ'զգայի ինքզինքս: Ընդերկար
պահեց Գատրգիւղ իմ վրաս իր դիւթութիւնը,
եւ մէկէ աւելի անդամներ փորձ փորձեցի հոն
գտնուլ, բայց միշտ յարմար չէնք մը գտնե-
լու դժուարութիւնները ետ մղեցին զիս: Կա-
մաց կամաց Սկիտար անոր տեղն առաւ իմ
սրտիս մէջ: Անոր պողոտայներուն լայնու-
թիւնը, անոր բարձրութիւնները սկսայ սիրել,
ու անոր եկեղեցիներուն մեծութիւնը, Ս.
Խաչին ստուերները, Ս. Կարապետին առատա-
լոյս պայծառութիւնը, եւ Իւսկիւտարցի համ
ժողովրդեան բարքերուն առաւել պարզու-
թիւնը: Մարդ կը սիրէ այն տեղերը որոց վրայ
իր քրտինքը կը թափէ. յամառ ու անվրդով
աշխատութեան յարմարագոյն վայր մ'էր Իւս-
կիւտար. կամաց կամաց ինձ աշակերտեալներու
նորահաս սերունդներ կը կազմուէին հոն,
որք ամէն քայլիս զէմն կ'ելլէին՝ հսգւոյ աղ-
գականութեան ժպիտ մը իրենց աչքերուն
մէջ: Բայց Իւսկիւտար պիտի չզղթայէր զիս
երջանկութեան եւ դժբախտութեան ամենէն
ամուր շղթաներովը: Հոն, զպրոցական մեղ-
ուանոցին մէջ իմ ընտանեկան բջիջս պիտի
կազմէի. անոր ծառերուն շուքին տակ պիտի
պատապարէի իմ բոյնս, անոր պարտէզնե-
րուն մէջ ամենէն երջանիկ ժպիտներս՝ պիտի
ժպտէի, ու, աւա՛ղ, անոր՝ հսգերուն վրայ
ամենէն լեղի արցունքներս պիտի լոյսի . . .
Իւսկիւտար ա'լ վերջին կայանս է անշուշտ,
քրտինքներովս ալ, արցունքներովս ալ անոր
հետ թրմուած խմորուած . . .


Վերեւ ակնարկուած բարեկամը դրած էր
թէ ոմանցմէ գուցէ տափակութիւն մեկնուե-
լու աստիճան միօրինակութեամբ մը կը սահն
օրերս, միւսնոյն գործը կրկնելով ամէնքն
ալ, միւսնոյն վաստակը բերելով շարունակ,
իրարու ետեւէ, անխափախ, անձանձրոյթ,
եւ ինք ատոր մէջ կարողութիւն մը կը գըտ-

ներս : Կարողութիւն կամ տկարութիւն, չգիտեմ, բայց ներքին զգացումն ու համոզումն յամառօրէն հաւատարիմ գտած են զիս միշտ ու սրտէ կերպով ձեւացուցած կեանքիս տարազը, պարտականութեան պահանջատուութիւնը տալով անոր : Հիմա դժբախտ, բայց սրտակէզ վշտիս հաւատարիմ, կը շարունակեմ միւս կողմէ հետեւիլ այն համոզումներուն որք զիս մղեցին առանձին վարժարան մը հիմնելու : Կը հարցնէք ինձ, սիրեցեալ բարեկամ, թէ ի՞նչ կրթանիքական իտէալ ունեցած եմ զայն հիմնելու ատեն : Իտէալս շատոնց արձանագրած եմ վարժարանիս Յայտագրներուն ճակատը . «Պէրպէրեան վարժարանի նպատակն է պատրաստել ազգին լուսավիտ եւ ազնուասիրտ անդամներ», որք աննախապաշար բազմակողմանի կրթութեամբ մը մշակուած մտքեր, ուղղաբարոյ եւ բարեխէր ընթացքով Պետութեան եւ Ազգին պատուաբեր ու օգտակար անհատներ, սիրոյ ու փառիկութեան ընդունակ հոգիներ ըլլան : Հանրային կրթութեան մասին Կայսերական Կառավարութենէն արտօնուած անհատական գործունէութեան շրջանակին մէջ ինքնուրոյն ուժերով ու համոզումներով գործել նախընտրեցի, եւ այսօր, մտացի, պարկեշտ ու արդիւնաւոր դարձունէութեան այլեւայլ ասպարէզներուն մէջ փայլող Պէրպէրեան Սանուց Կարեւոր թուին հանդէս, կ'ըսեն ինձ թէ իտէալս ըստ կարի իրագործուած է :

Յարգանք

16 Հոկտ. 1901

Սիւլտար



ԱՅԽԱՐՀԻ ԹՐՋԱՆԸ

ՇՐՋԻԿԻ ՆՕԹԵՐ

(Բ.)

7 Հոկտ. Բաւեյուտայ Գլուխ

Աւերիկէի մասին, իրր «Խաւարակուն» երկիր մը, անանկ գէշ դաղափար մը կազմած ենք որ, անոր ամէն մասերն ալ անքաղակիրթ բնակիչներու բոյն մը կ'երեւակայէի, գէթ ես, իմ մասիս :

Անոր ամէնէն քաղաքակրթուած անկիւնը անգամ, կը կարծէի թէ տակաւին վայրի ու

վատիս մըն է, աւազուտ ամայութիւններու մէջ ցանուած փսոր մը կանանչով, որոնց մէջտեղումները, հասարակածի ցանցաւ բոյսեր ու մեզի անձանօթ ամենի ծառեր, իրենց լայն տերեւները կը յուեն, եւրոպական ճաշակով շինուած հատկոտոր շէնքերու զըլտուն, որոնք սակայն աւագէ անմշակ ճամբաներ ունենան իրենց շուրջը, բարձրաբերձ պամպուկներով եզերուած :

Ու իրր լրացուցիչ՝ բնութեան այս հմայքոտ կուսութիւններուն, կ'ուզէի որ մարդիկ այս վայրի հողերուն վրայ բոսիկ ստքով քալէին, իրենց մերկութիւնը լայն տերեւով մը միայն ծածկած, արձակ ու բարբառիկ բնական, բնութեան այդ կոյս վայրիկութիւններուն մէջ :

Ձանդիպարի տեսքը, չարաշուք յուսախաբութիւն մը եղաւ այդ բաղձանքիս : Քաղաքակրթուած մարդուն պարտաւոր ձեռքը, հոն ալ գացած էր սարքել իր բարդ սեթեւեթները նրաճաշակութեան, անպէտ նեղութիւններու մէջ դնելով երկրացիներուն անկաշկանդ նիստուկարը :

Ու, ապրելու ձեւին համար այդ աւելորդ պաճուճանքներուն հանդէպ, տխուր յուսախաբութեան մը տակ, կը մտածէի որ, ի՞նչ եմ բսել կ'ուզէ սա քաղաքակրթուած մարդը, որ չի սղմելով իր բնակութեան սահմաններուն մէջ, աշխարհի մինչեւ ամէնէն մութ անկիւնները կ'երթայ, փոփոխելու համար բնականօրէն ապրուած կեանքի մը բովանդակ հանգստաւէտութիւնը :

Քաղաքակիրթ քաղաքի մը բովանդակ խճողեալ եւուզեւուսի վիճակը ստացած էր Ձանդիպար, ուր սակայն բնական կուսութեան մը մաքուր դրոշմը միշտ կը մնար, քաղաքին կեդրոնէն քիչ մը հեռու տեղուած տանքը, եւ բնիկներուն վարք ու բարքին մէջ :

Ոչլուսաւորեալ ժողովուրդներու վայրի բարք ու վարքը միշտ կը մնայ անոնց վրայ, վայելուչ հրապոյր մը տալով անոնց շարժուածքներուն, բնութեան այդ անկոխ հողերուն վրայ :

Բնազդութիւն քաղաքակրթութեան այդ քաղաքին մէջ, տեղացին, նորէն նոյն մարդն է, որ ուսէն երկայն փայտով մը կախ-

ուած կողմներու մէջ, բոսիկ, անպաճայճ, բան մը փոխադրէ, տեղական խօշ երգի մը կտորը մտնալով: Կայտառն զուարթ եղանակ մը, որ կեանքի անփութութեան գաղափարը ներշնչէ հոգիիդ:

Յորեկին, հեղձուցիչ արեւին տակ, որ կապարի տաքութիւն մը կը մաղէ վար, աղւոր մը պտտելէ ետքը՝ քաղաքին ամէն անկիւնները, գիշերուան, շքեղ օթէլ մը կ'իջեւանինք: Բախարի հետ, յաջորդ անուան, կանուխ, Պակասոյէն՝ որ Զանգիպարի դիմացը, ցամաքի վրայ կարեւոր քաղաք մըն է, կարաւանով դէպ ի արեւմուտք մեկնելու տառաջդրութիւնով:

Ատտեղայիներուն մաքին մէջ դեռ վառ կը մնայ Սթէնլիի յիշատակը, որ 1889ին, իր երկու տարուան ճամբորդութենէն ետքը, հոս հասաւ:

Կարաւանի խմբակցութիւնը, ճամբայ ելքը, անոր կեանքոտ եռուզեղքը, ամբողջ գեղեցկութիւն մըն է, որուն յիշատակը միտքէ չելլեր երբեք:

Արեւը դեռ չի հրդեհած անծայր դաշտերուն սահմանը, բոլոր ուղեւորները, ամէն ուղղութենէ, ամէն տեսակ մարդոցմէ բաղկացած, կը հաւաքուին Քիլօս կոչուած տեղը, եւ մեծ հապճեպով սարքելով ուղտերը, ճամբայ կ'իյնան կանուխիէկ, խանձող արեւին տաքէն ազատելու համար, գէթ օրուան մէկ մասին մէջ:

Կարաւանի այդ կեանքոտ խուժողուժը, ամբողջ հմայք մըն է: Տեղացի մատղշուկ աղջնակներ, որոնց երեսին հասարակածի պայծառ արեւը ցաթած է, հսկայ ուղտերուն կռնակը ելած, — երբեմն զոյգ, — իրենց բովանդակ վայրագ գեղեցկութեան մէջ, կատակելով, խնդալով, եւ հեռուանց հեռու չարածճի անառակութիւններ ընելով, կը խթանեն ուղտերին, իրենց քովն ի վեր ունենալով, դրացի կամ ազգական տղայ-մարդեր, որոնք իրենց քուրբարտանքին պաշտպանութիւնը ստանձնած են, ճամբուն մէջ, ուղտէն գլտորելէ կամ ուրիշ վտանգէ մը պաշտպանելու համար: Անոնցմէ շատեր, ժամանակին չկորսնցնելու համար, եւրոպացիներէ ընդօրինակուած տեղական կոշտ ձեւ,

ռազորներ կը բանին ուղտերուն վրայ, եւ ուրիշներ, իրենց մարգարի պէս հատիկ-հատիկ սկստանալովը պարարտ արմաւեններուն միտը սիրովելով, կուտը կը նետեն իրենց սիրած տղայ-մարդուն գլխուն, կոշտ քրքիչ մը արծակելով:

Ճամբան, խումբէն քանի մը մասեր, կը բաժնուին գանազան ուղղութիւններով, եւ մենք կ'ուղղուինք դէպ ի հարաւ, Նիասսա լիճին սահմանները:

Այնչափ ստուար բազմութենէ մը բաղկացած է կարաւանը, որ մէկ ծայրէն միւսը շերեւար գրեթէ, ցրուած անապատին լայնարձակ տարածութիւններուն մէջ: Ուղտերու վրայ դաշտահանդէս մըն է այս ճամբորդութիւնը: Խումբին մէջ բան մը պակաս չկայ: Տեղական երաժշտական տարօրինակ գործիքներով, քաջարի տղայ-մարդերը անշուշտ անապատին լուսիւնը կը պատեն, իրենց ամբողջ ուժովը թոքերնին ճաթեցնելով, եւ խլացուցիչ աղմուկ մը յարուցանելով որ բաղձմութեան երգի, կատակի, կանչվառութի ժխորին միացած, ահագին գոռում գոչումով մը կը լեցնէ կոյս ամայութիւններուն լուսիւնը:

Գիշերով կը հասնինք, — ալ չեմ' յիշեր թէ քանի՛ օրէն ետքը, — Նիասսա լիճին եւ զերքները, որուն վրայ պտոյտ մը ընել կ'առաջարկէ ընկերս, Բախա, վերջապէս մարմիրուն ցալքերուն տակ, որ անուշ փաթիլու մով մը կը ջնարակէ լիճին մակերեսայթը:

Քաջարի Քաջերեր են այս լիճին նաւաւ վարները, որոնք իրենց ուժին համեմատ գործ չի գտնելով տեղերնին, հոս եկած են, կատաղի լիճի մը ալիքներուն հետ մարտնչելու:

Զարմացական խնդուքով մը, երկուքս, ես ու Բախա, կը մտնենք Քաջերին կուրը, զոր հաճոյակատար հիւրասիրութիւնով մը կը մօտիկցնէ ան խորտուբորտ ու սիզուա եղերքին: Բոլորովին տարօրինակ ձեւ մըն է նաւակի, այդ կուրը, երկայն ու նեղ փորուած տաշտ մը *funnel* ծառէ, որ այդ կողմերը շատ կը գտնուի, իր արմատը ձգած լիճիւր թաց եղերքներուն վրայ: Խնդուքներս, անուշ երիտասարդ մըն է մեր նաւավարը, որ ձեւերով, մունջ խոսուած քներով, կը

բացատրէ մեզի թէ, մատնիով մը կապուած է աւտորալիայի գաղթականի մը աղջկանը հետ, եւ շատ մօտերը սլիտի ամուսնանայ : Սիւզետ, խորունկ լիճ մըն է Նիսասան, որուն սակ բուստի եւ մարգրիտի բոյներ կայ կ'ըսեն : Տեղացիներէն շատեր այդ արուեստով կը զբաղին, եւ մեր նաւավարն ալ, կը հասկցնէ իր մունջ լեզուովը թէ, դեկտեմբերի ժամանակները ինք ալ կը զբաղի բուստահանութեամբ :

Տեսակ մը բարբառով, զոր Մատակաս կարցիք կը գործածեն, ընկերս կը հարցնէ թէ, ինչպէ՞ս կ'որսան այդ կենդանին : Վիհուտ, նաւավարը, որունքներէն սկիթածին պէս կապոյտ վարտիքը, ճշմար, կը նետուի լիճին մէջ, մեծ վախու մը մատնելով երկուքս : Քանի մը վայրկեան մտառանջութեան մէջ կը մնանք. բոլորովին կ'անկեւտութեանայ, սուգումին հետքը անգամ չի ձգելով ետեւէն : Մէյ մըն ալ, բաւական հեհուն, խլուրդի մը պէս, իր գոռոզ մազերով սեւաթոյր գլուխը դուրս կը ցցէ լիճին մէջէն, ու կ'ելլէ խորակի մը վրայ կը տնկուի, տաքուկ ուրախութիւնով մը խնդալով մեր երեսին, իր գեղջուկի պարզամիտ խնդուքովը, իրր աննման մեծադործութիւն մը գործող մէկը, ծովէն ափ մը բուստ հանելով, զոր իր ձեռքին մէջ պարզած, հեռուէն, միշտ զուարթ խնդուք մը շրթունքներուն վրայ, աչուները բանալով, կը ցուցնէ մեզի, բերանին աղեղը հետզհետէ ականջներուն մօտիկ ցընելով. ուրախութենէն :

Յետոյ, նետուելով նորէն ջուրին մէջ, լողալէն, մեզի կու գայ, ու կէս մէջքէն կուրին եղբրքէն կախուած, բուստը մեզի տալով, կը ցատկէ նաւակ :

Վերջապէս կը նուաղի քոխա ծառերու շարքի մը ետեւ, ու մենք ցամաք կ'ելլենք, շրջակայ գիւղի մը մէջ գիշերելու համար ուր կ'առաջնորդէ մեզ մեր անձնուէր նաւավարը :

ՍԳԷԼԼՍ.

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ ՕՐԱՅՈՅՅԸ

Օրացոյցը, որ Ազգ. Հիւանդանոցի հասոյթի կարեւոր աղբիւրներէն մէկն է, 1902ի տարին համար նորէն հրատարակուեցաւ : Օրացոյցը կատարելագոյն գիւրութիւն մըն է թէ՛ եկեղեցիի պաշտօնեաներուն, թէ՛ եկեղեցականներուն եւ թէ՛ նոյն իսկ շուկայի մար-

դոց համար : Օրացոյցը ա՛յնքան կարեւոր նկատուած է որ էջմիածինէն ու Երուսաղէմէն ալ կը հրատարակուի, թո՛ղ ուրիշները : Եւ որովհետեւ Ազգ. Հիւանդանոցի Օրացոյցը, իր հրատարակութիւն Կ. Պոլսի Պատրիարքութեան, ո՛չ միայն պէտք մը կը լրացնէ, այլ նաեւ հասոյթ մը — Ազգ. Հիւանդանոցի պատըսպարուածներու հացին, անշուշտ, ամէն հայ պիտի փութայ հատ մը գնել : Այս մասին նոր այժ մը կուտայ Ս. Պատրիարք Հայրը իր յորդորիչ կոնդակներով : Այս պաշտօնական յայտարարութիւնները՝ կը շեշտեն Օրացոյցի հասոյթին գրուած տեղը Ազգ. Հիւանդանոցի պէտքերուն մէջ :

Փափաքելի է որ Ընդարձակ Օրացոյցն ալ որ մը առաջ լըյս տեսնէ : Ընդարձակ Օրացոյցի պատրաստութեան մէջ՝ պատրաստողներուն կողմէն թէեւ անհամաձայնութիւններ լսուեցան, բայց չենք փափաքիր որ անհամաձայնութեան մ'առաջնորդէ ա՛յդ Օրացոյցի ընդարձակութիւնը, որ թերեւս հիմայ մամուլի տակ է (*) :

Այս առթիւ երեք առաջարկներ կը թելադրենք Ազգ. Հիւանդանոցի բարեջան Հոգաբարձութեան, յաջորդ տարուան համար :

Առաջին. Օրացոյցը կարելի եղածին չափ կանուխ հրատարակել, որպէս զի հետաւոր գաւառներու մէջ պատրաստ ըլլայ Դեկտեմբերի վերջին կիսուն եւ Կադանդի առթիւ ժողովուրդը գիւրութիւն ունենայ նոր օրացոյցներէն հրապուրուելու : Եւ քանի որ հիմայ Առաջնորդարաններու ալ կը յանձնարարուի հոգ տանիլ Օրացոյցներու սպառումին, միշտ կանուխ հասցնելու փոյթը լիովին եւ արագօրէն կը վարձատրուի :

Երկրորդ. Ընդարձակ Օրացոյցի պատրաստութեան համար երեք կարող (գրագէտ, բանասէր եւ հաշուագէտ) անձերէ մասնախումբ մը կազմել, որպէս զի այս մասնախումբը ծրարադիր մը շինէ Ընդարձակ Օրացոյցին համար, նիւթերը դաստարէ, իւրաքանչիւր նիւթի համար տեղ որոշէ եւ ետքը այս նիւ-

Ծ. Խ. — Ընդարձակ Օրացոյցին տպագրութեան սկսուած է արդէն Մատթեոսեան տպարանին մէջ եւ մօտէն գիտենք որ այս տարուանը նախորդներէն ոչ նուազ ձօն ու շահեկան պիտի ըլլայ :

Թերը յանձնէ ձեռնհասներուն : Այս կերպով խմբագրած եւ պատրաստած նիւթերը Մասնախումբը կարգի կը դնէ ծրագրին համեմատ եւ կը յանձնուի տպագրութեան : Այս կերպով թէ՛ Օրացոյցը բազմակողմանի ընդարձակութիւն մը կունենայ , թէ՛ Ազգ. Հիւանդանոցի անտուկը 50-60 սակի ծախքէ մը կ'ազատուի եւ թէ՛ վերջապէս Ընդարձակ Օրացոյցը ժամանակին լոյս կը տեսնէ ներդաշնակ համաձայնութեամբ :

Երրորդ առաջարկս ուղղակի Օրացոյցի բովանդակութեան մասին է : Մեր Օրացոյցը որոշ գոյն մը չունի կարծես . տեսակ մը հանրագիտակ է . Յունաց , Լատինաց , Հրէից եւայլն , շատ մը տօներն ու օրերն ալ նշանակուած են որոնցմէ շատերը բոլորովին անկարելոր . զոր օր . պատահմամբ բանալով Օրացոյցը « Յունկար 22 Ա. օր , Պահաց Առաջաւորաց . Յն. լուծումն պահոց յայտմ եօթնեկի , — 23 Լտ. Ագաթայ կուսին . 24. Լտ. Դուրթեայ կուսին եւայլն . — Փետրվար 10 Յն. Ղարալամպոսի քահանային , Մայիս 24. Լտ. Տօն խորհրդոյ Ս. Հաղորդութեան . — Յունիս 1 Լտ. Տօն սրտին Յիսուսի . 19. Լտ. Այցելութիւն Ս. Աստուածածնի եւայլն » — ստպէս քանի մը հատ նշանակած ըլլալու համար :

Ի՞նչ օգուտ կամ ի՞նչ պէտք կայ որ այսպիսի տօներու յիշատակութիւնները շատնան , Շատ շատ , կարծենք , ամենէն նշանաւոր տօներն եւ օրերը որ ըստ ինքեան կամ մեր Եկեղեցիի տօներուն եւ օրերուն հետ յարարեութիւն ունին , ասոնք յիշատակուին : Լատինները , զոր օր . մեր տուածին չափ անշկուտան մեր տօներուն եւ օրերուն իրենց օրացոյցներուն մէջ :

Եթէ զտուի մեր Օրացոյցը եւ իր հաստատուն գոյնը գտնէ , կարծենք աւելի լաւ կ'ըլլայ եւ աւելի սիրելի :

Իսկ եթէ անհրաժեշտ են միւս եկեղեցիներու օրերուն եւ տօներուն յիշատակութիւնը՝ առանձին բաժին մը յատկացնելու է անոնց , Ընդարձակ Օրացոյցի մէջ ուրիշ հետաքրքրական նիւթերուն քով :

ԽՈՍՐՈՎԻՒ

ԱՇՆԱՆ ՆՕԹԵՐ

ԱՐԿԳԻԿԸ

Մինչ զըստասէրները շունչերնին թէփէ՝ Պաշլի թատրոնը կ'առնեն , բարոյանելու համար Բարիգեան անցորդ խումբին կիսաշխարհիկ ներկայացումը « սրուն դուռները գոց պիտի ըլլան 20 տարեկանէ վար երկու սեռի երիտասարդներու առջեւ » — ինչպէս ծանուցուած էր Ազգին մէջ — ես՝ հանդարտիկ քայլերս կ'ուղղեմ դէպի Քօնքորտիա , Մնակեան խումբին պարկեշտասուն մէկ առամը տեսնելու : Արդեօք Մաւիսի ընթերցողներուն մէջ գայթակղողներ պիտի գտնուէն , այսքան թեթեւ յիշատակութիւն մը իսկ ընելուս համար այդ Մոնմարդրեան խումբին , թէեւ՝ լուծածին նայելով՝ անոր երեկոյթները խօստացուածին չափ զգլխիչ բան մը չունին եղեր : Մնաց որ , հակառակ պարագային , գայթակղութեան ճիչերը Մաւիսի ընթերցողներուն կողմէ չէ որ պիտի արձակուէին՝ ինչպէս չարձակուեցան նոյն իսկ այն թուականին ուր նորութեան կարգը անցած էր սիրային գրուածքէ մը կամ նորավէպէ մը գայթակղելու , այլ անկէ բաւական հեռու գտնուող կարգ մը գրողներէ : Եթէ այդ վէճերը չարձակուէին տակաւին , խորհուրդ պիտի տայի Մաւիսի խմբագրութեան որ ինքն ալ իր վիպական ճիւղին զլուսը արձանագրէր սա տեսակ ազդարարութիւն մը . — « Քսան տարեկանէ վար երկու սեռի երիտասարդները թո՛ղ չի կարդան » :

Գիւտը իմ չէ , ինչպէս տեսաք , այլ Բարիգեան թատերախումբի մը : Եւ ապահովապէս , ամէն ընթերցող՝ Մաւիսի ո՛ր եւ է բաւարարուած մէկ նորավէպը աւարտելուն՝ պիտի ըսէր .

— Բայց ատոնց մէջ գայթակղական բան մը չի կայ , եւ եթէ նիւթը մերկացնենք իր գրական ճոխ կեղեւէն ու վիպային հրապուրիչ հիւսուածքէն , պիտի գտնենք մէկը կեանքի այն սովորական դարձուածքներուն կամ դէպքերուն որոնց ականատես կ'ըլլան . . . հինգ տարեկան աղջիկներն անգամ :

Բարեբաղդաբար . ժամանակէ մը ի վեր գլուխին հանդարտ է այդ տիրացուական յանկերգներէն : Սպասելով անոնց վերսկսումին — վասն զի կարգ մը արտերու պէս պարբերաբար երեւան կելլեն անոնք — անկեղծապէս պիտի ըսեմ որ տեսակ մը միամիտ հաճոյքով կը կարգայի այդ գրուածքները ուրանք ցոյց կուտային թէ կեղծաւորութիւնը ու տիմարութիւնը մինչեւ ո՛ր կրնան տանիլ գրիչ մը որ անոնցմով անուն վաստակիլ կուզէ : Իմ մենասէրի ու մենակեացի սովորութիւններս առիթ չի տուին բնաւ ինծի՝ որ մը հանդիսատեսս ըլլալ այդ յօդուածագիր պարունեւրէն մէկուն գնացքին՝ երբ Սիրքէճի կայաւորանք կուղղուէր տոմսակ գնելու ետեգուէրի համար , եւ կամ երբ իրիկունք , իր թաղին ընթերցարան—սրճարանը կը մտնէր՝ գոհունակութեան ժպիտներ արձակելով չորս դին : Բայց միշտ երեւակայած եմ որ , իրենց յօդուածը պարունակող թերթէն քանի մը օրինակներ չա՛տ աւելի հպարտութեամբ բռնած ըլլալու եմ ձեռքերնին՝ որքան հպարտութիւն չզգացին գուցէ՝ ուսուցչական վկայականին տանելով :

Քոնքորտիան մտայ , կրտէի , Առնան չը Ծոռփիկն տեսնելու : Ուրիշ ի՞նչ կրնայի ընել աշնան այդ անձրեւոտ կիրակին որ ձմրան ցրտաշունչ օդը չունէր՝ կրակարանին անկիւնը հրապարիչ ընծայելու համար , ոչ ալ ամրան պայծառ երկինքը՝ բացօթեայ պտուղի հրաւիրող : Չէք սպասեր անշուշտ որ խաղին նիւթը պատմեմ . նախ որ թատերական քրոնիկ մը չէ գրածս , եւ յետոյ . . . ի՞նչ արարուած տուած մը , որ Սարսէն անգամ պիտի չուրեցնէր :

Մեր վաղածանօթ դերասաններն ու դերասանուհիները չեն փոխուած անցեալ տարուրէն ի վեր . Մնակեան նոյն գորովագութ հօր դերին մէջն է միշտ , Ալիքսանեան նոյն փառքուած հակառակորդը , եւ Հօրաս կը պահէ իր յաւիտենապէս ողբերգական ձայնը : Ու սրահին մէջ , կը վայրանան , կ'արտասուեն , կը ծափահարեն , իւրաքանչիւր տեսարանի ազդեցութեան համեմատ : — Գիտէք որ , Վաղիկեաներու հանդիսականները , գիւղերէն եկած , աւելի դիւրագգած կըլլան քան գիւղերային ներկայացուցիչներու հանդիսականները , Բերացի ու քիչ մը սկեպարիկ :

Միջնարարի մը , յայտագիրը ձեռքս անցաւ որուն ձախար հրաւէր մը ունէր Մնակեան , խումբին Տնօրէնը : Այդ հրաւէրը՝ իր վտիտ մերկութեանը ու հակիրճ ձեւին մէջ՝ դերասանական կեանքի իրական պատկերա-

ցում մըն էր , թերեւս անզգալաբար գրուած , — գրչի արագ շարժումով մը թուղթին յանձնուող այն ասղերէն որոնք մտածուած , խնամով սրագորուած ստուար էջերէ աւելի կ'արժեն .

Տրամախառն հաճոյքով մը կընդօրինակեմ հոս Դերասանապետին տողերը .

Այս արուեստին մէջ ծերացածներէն մէկն ալ իմ վաղեմի բնկերս Սանճագճիանն է : Պարոնեանն ալ անկէ շատ ձեռի չէ . երկուքն ալ բեմի անխոնջ , հանդարտ ու մշտական աշխատողներ են : Անցեալները Սանճագճիանին քով արկղիկ մը տեսայ , հարցուցի թէ ինչ կը պարունակէ այդ փոքր ստարկիկը . «Հարստութիւնս քսաւ ու քացաւ . իր դերասանութեան սկսած առաջին օրերէն ի վեր կատարած դերերն էին զորս խնամով պահած էր . ակամայ փոխկեցայ .

Այս տողերուն վրայ յառած մնացին աչքերս , ներկայացման միջեւ վերջը . ու փոխանակ խաղին հետեւելու , կը մտածէի ծերունի դերասանին արկղիկին վրայ , որ գրամի տեղ՝ երսուն կամ աւելի տարիներ կատարած դերերուն ձեռագրիւններով լեցուն էր : Թաղարն մտնելու պահուս , տեսած էի Սանճագճիանը ներքին դրանը մէջ կեցած , կէս մը անձրեւին տակ , իր քով՝ աթոռակի մը վրայ՝ ունենալով տոմսակներու գէզ մը որ չէր սպառեր : Պոչոյ միակ հայ դերասանն էր զոր մօտէն չէի տեսած բնաւ . ծերունիի մը կերպարանքը ունէր , ընկճուած , յափրացած ծերունի մը . յուսահատ շարժումով մը կը կարկատէր ձեռքը ամէն անգամ որ ներս մտնողը յայտագիր մը կուզէր : Ի՞նչ պիտի մնար իրեն՝ այս ցերեկոյթէն որ իր ու իր երկու արուեստակիցներուն նպաստ կը տրուէր . բովանդակ ծախքը վճարուէլէն ետքը , հազիւ թերեւս երկու—երեք ոսկի : Եւ ապահովապէս , այդ երկու—երեք ոսկին չէր որ պիտի լեցնէր իր արկղիկը , ինքը՝ հին դերասանի մը փորձ հումակերպութեամբ՝ աւելին չէր ակնկալեր արդէն . հակառակ արդիւնք մը թերեւս զարմացնէր զինքը :

Ներկայացումէն վերջը , մթնշաղին , անգամ մըն ալ նշմարեցի զինքը , երբ անձրեւին տակ կը հեռանար թատրոնէն , տարտամ քայլերով , գլխիկոր , նոյն արտը մարդը որ եկած էր անտուն , անոնց մեծ ակնկալութեան մը , մտածելով անշուշտ իր արկղիկին ուրուն պարունակած հարստութեանը վրայ պիտի աւելնար , այս նպաստի ներկայացումէն , նոյն օրուան դերին — Տիւշաթէլի դերին — ձեռագիրն ալ :

Այդ արկղիկին պատմութիւնը՝ բովանդակ հայ դերասանութեան պատմութիւնը կը պարունակէ իր մէջ : Կ'արժէր տեղ մը արձանագրել զայն , ասոր համար է որ այս էջը նուիրեցի անոր :

ՄԵՆԱՍԷՐ

ՄԱՏԼԵՆԻ ՄԵՂՔԸ

Հեղ. ՏԻԿԻՆ Բ. ՔԱՌՕ

Թարգմ. ՏՕՄԻՆՕ

— Մաալէն, սիրելի Մաալէն, պէտք է որ խօսիմ ձեզի, ժամանակ է ա՛լ, թերեւս չաա ուշ ալ մնացի . . .

— Խնչպէս, դո՞ւք էք, Ռօպէս, գոչեցի չուարումս անցնելէ վերջ . . . Իրաւ որ վախճուցիք զիս . . . Խնչ կ'ընէք կոր հոգ, մուծի՛ն մէջ . . .

— Ձեզի կը մտածէի, ըսաւ լուրջ ձայնով մը, եւ կը հաւտամ որ Աստուած առաջնորդեց ձեզ հասնելու Երբոր ձեր գալը տեսայ, իբր թէ իմ գաղտնի հրաւերիս պատասխանելու համար, երբ ճանչցայ ձեր դիւրաշարժ եւ փափուկ քաղաքաւորը, ձեր գեղեցիկ աչքերը որոնք խաւարին մէջ իսկ կը լուսաւորեն, ինքնին ըսի թէ ժամանակ էր խօսելու եւ պէտք էր որ բոլոր երկրպագութիւնները դադարէին : Եւ սակայն տեսէ՛ք որքան կը դողամ, Մաալէն, Աստուած իմ, բան մը չի գուշակեցի՞ք երբեք . . . Եթէ գիտէք գաղտնիքս, գիտեցէ՛ք վրաս, ըսէք ինծի . . . չի հասկցա՞ք մինչեւ հիմա, չի կարգացի՞ք ամբողջ սիրտս աչքերուս մէջ . . .

Ձարմայումս չափ չունէր . . . չէի հասկնար :

— Բայց ի՞նչ կ'ըսէք, թոթովեցի . . . Լուրջը կը սիրէ ձեզ, գիտէք արդէն այդպէս ըլլալը . . . Խենդ էք :

— Կրնայ ըլլալ, պատասխանեց հանդարտօրէն, բայց չէ՞ք մեղքնար այս վիճակս : Եթէ գիտնայիք թէ որքա՛ն տառապեցայ զգալով սէրս որ կը մեծնայ իմ մէջս . . .

— Ռօպէս, ըսի, խիստ եւ զօրաւոր ձայնով մը, թէեւ սիրտս կը բարախէր, բոտ մը աւելի չեմ ներքեր : Ձեր խօսքերուն ամէն մէկը թշնամանք մըն է . . . Խնչպէս չէք հասկնար ատիկա եւ կը համարձակիք սիրոյ վրայ խօսիլ ինծի . . .

— Ներողութիւն, միմջեց . . . Խենդ եւ իրաւ որ . . . Խնչպէս կ'ըսէք . . . Բայց կը յար-

գեմ եւ կը պաշտեմ ձեզ . . . մտիկ ըրէք . . . հաճեցէք լսել զիս . . . Կրնամ Լուրջի տալ սիրտ մը որ ձերն է . . . ուղի՞ղ բան է ասիկա, ըսէք . . . Կրնամ ընել այդպէս . . . գոնէ գիտնայի թէ անիկա ալ կը սիրէ զիս, բայց տղայ է դեռ, իր տարիքին մէջ կրնա՞յ, գիտէ՞ սիրել : Մաալէն, ազատ եմ տակաւին, մտածեցէ՛ք . . . մեռնելու չափ կը սիրեմ ձեզ . . .

— Կը բա՛ւէ, գոչեցի հրելով գայն, որովհետեւ ոտքերուս տակն էր գրեթէ . . . չե՛մ ուզեր մտիկ ընել ձեզի, բոլոր ասոնք վատութիւն է քրոջս հանգէպ եւ ինծի համար ալ անարգանք մը :

Շարժում մ'ըրի դուրս ելլելու համար :

— Ձէ՞ք ուզեր մտիկ ընել, յարեց՝ ձայնը զօրացնելով յանկարծ եւ բռնելով ձեռքերս զորս իրեններուն մէջ սեղմեց . . . անգութ էք, Մաալէն, բայց ազէ՛կ գիտցէք, իմ սէրս վհատ տեսակէն չէ : Ձեր չուզելովն իսկ պիտի սիրեմ ձեզ եւ պիտի ստիպեմ որ դուք ալ սիրէք զիս . . . օ՛հ, գիտեմ թէ պիտի ծաղրէք զիս, բայց դեռ չէք գիտեր դուք սէրը . . . կը կարծէ՞ք թէ մարդ կրնայ ուղածին պէս քակել ու կապել այդ շղթան եւ ժպտիլ կամ զլուխը երեքցնել արհամարհանքով : Կը կարծէ՞ք թէ էրիկ մարդու մը կրնաք ըսել . . . — այսինչը սիրէ, այնինչը մի՛ սիրեր — : Սէրը չընտրէր, Մաալէն, բարձրէն կուգայ եւ գետինը կը զարնէ մեզ . . . մի՛ խնդաք, անխոհեմ մ'ըլլաք . . . վերջէն սուղի կը նստի ձեզի . . .

Սոսա՞ծ ատենը, խռոված կը զգայի ինքզինքս, կէս մը յազմուած արդէն : Իր կրակոտ բառերը, իր մինչեւ այն ատեն անծանօթ բարկութիւնը, գաղտնի մեղսակից մը կը գտնէին տկար սրտիս մէջ . . . Բայց ինքզինքս բռնեցի եւ անտարբերութիւն կեղծելով՝ ետ քաշեցի ձեռքերս զորս բռնած էր դեռ : Նոյն

պահուն , լոյսի ցոլք մը սահեցաւ զրան ետին եւ շրջագգեստի մը խորշափը քովի սալօնին գորգին վրայ , մեզ իմացուցին թէ Լուիզ կը մօտենար . . .

— Մտալէ՛ն , բաւ Թօպէս արագարար , բաւ մը եւս , մէկ բաւ մը միայն . — Ի՞նչ կերպով անարգած պիտի ըլլար ձեզի սէրս , եթէ Լուիզ համակերպէր ատոր : Թողէ՛ք որ . . .

— Լուսթիւն , ի սէր Աստուծոյ , գոչեցի սոսկումով :

Դրան վարագոյրը բացուած էր եւ Լուիզի զլուխը երեցեր էր ժպտուն :

— Ի՛նչպէս . . . հո՞ս էք երկուքդ ալ , մտքին մէջ , ըսաւ միամտարար , յետոյ առանց յազմունքս նշմարելու . — Հայրս կը սպասէ կոր , շուտ երթանք . վստահ եմ որ երկուքիդ ալ քունը եկած էր , աւելցուց բռնելով Թօպէսի թեւէն եւ խօսքար քաշեց տարաւ զայն :

Յամբաքայլ հետեւեցայ անոնց , ինքզինքս երջանիկ զգալով վայրկենական այդ առանձնութենէն ուր դէմքիս կարծրութիւնը կրնայի ծածկել :

Շատ տաժանելի երեկոյթ մը անցուցի թատրոնին մէջ , այդ գիշեր : Պարպիկն Տը Սեփիլլի չողջուուն երաժշտութիւնը , խաղին զուարթութիւնը կը գրգռէին ջիւղերս , Լուիզի հանդարտ վիճակը կը ցաւցնէր սիրտս : Թօպէս այնպէս կը ձեւացնէր թէ ինձմով կը զբաղէր միայն , ինծի կը նայէր միայն , բանի տեղ չդնելով միւսներուն ուշադրութեան առարկայ ըլլալին : Կը դողդոջայի վախճալով որ հօրեղբայրս եւ Լուիզ կը նշմարեն վերջապէս Թօպէսի նայուածքները : Երբեմն այնպէս կը թուէր ինծի թէ հօրեղբայրս անսովոր տիրութիւն մը կունենար եւ ինքզինքս կը համոզէի թէ անիկա կը կասկածէր արդէն մեր վրայ : Իր է՛ն պարզ խօսքերուն մէջ , կը կարծէի տեսնել ակնարկութիւն մը կամ յանգիմանութիւն մը : Ես Լուիզը կը զիտէի եւ անոր ժպտիլը տեսնելով , արգահատանք մը կունենայի ակամայ : Յետոյ բոլոր այս բաներէն կունենայի ներքին գոհունակութիւն մը որ կը զայրացնէր զիս : Կը տատապէի եւ երջանիկ էի : Անբացատրելի ուրախութիւն մը

կը լեցնէր սիրտս եւ սակայն սուր ու կսկծեցուցիչ բան մը կը խառնուէր երջանկութեան :

Վերջապէս ներկայացումը աւարտեցաւ : Պէտք ունէի մթութեան , լռութեան , մանաւանդ առանձնանալու : Տուն վերադառնալուս պէս , յոգնած ըլլալս պատճառ բռնեցի եւ գացի փակուեցայ սենեակիս մէջ : Հո՛ն ծունգի վրայ եւ զլուխս ձեռքերուս մէջ , փորձեցի մտածումներս հաւաքել : Երկնային խորհուրդ մը չէր որ կը փնտռէի այս կերպով , փառասէր սիրտս օգնութեան պէտքը չէր զգար : Զիս ճնշողը , խորտակող յուզումներու յանկարծական ծանրութիւնն էր : Զգիտեմ թէ եղա՞ծ էր երբեք սիրոյ այսքան սաստիկ յայտնութիւն մը : Միտքս կեռուղեռար ինչպէս խօլ հաճոյքներու եւ զուարճութիւններու մրրիկի մը մէջ : — Սիրե՛լ ու սիրուի՛լ : Այս բառերը անհուն հորիզոններ կը բանային ինծի եւ անոնց մէջ հոգիս թեւաւոր էակի մը պէս կը թռչտէր եւ զայն հալածելու եւ բռնելու ջանքերուս մէջ կը հատնէի , ուժաթափ կըլլայի Մէկ վայրկեանի մէջ , զոջացի անցեալիս վրայ , ամէցայ սրտիս անդորրութեանը եւ լռութեանը մէջ անցուցած տարիներուս վրայ : Այնպէս կերեւար ինծի թէ նոր կը հասկնայի կեանքին արժէքը եւ թէ ամէն բան , պարտականութիւն , երջանկութիւն , պատիւ , կամեմտութիւն սիրուելու հաճոյքին մէջ : Ամբողջ գիշերը այսպէս անցաւ եւ առտուան դէմ միայն թմրեցայ եւ քունս տարաւ :

Ի՛նչ տեղի ունեցաւ իմ մէջս , ի՛նչ խորհրդաւոր փոփոխութիւն մը կատարուեցաւ առանց իմ գիտակցութեան : Երբ որ արթնեցայ , տպաւորութիւններս փոխուած էին բոլոր : Առջի գիշերուան գրգռութեանս տեղ խռնութիւն մը կը զգայի եւ տարօրինակ տաղտկութիւն մը կը ճնշէր զիս : Անկողնէս ելայ եւ գացի պատուհանը բացի : Երկինքը գորշ էր եւ անձրեւի պաղ կաթիլներ դէմքիս զարնուեցան : Պատուհանը գոցեցի եւ անկողին մօտայ նօրէն , դողդոջով : Մանրացած արտեանտունքներս ինքնին կը գոցուէին , բայց չկրցայ քնանալ : Հազարումէկ մտածումներ կը շփոթուէին գլխուս մէջ եւ տաքութիւնը կը շատնար մէջս : Է՛ն տխուր եւ տաղտկալի մտածումս Լուիզի յիշատակն էր , ի զուր

կաշխատէի վանել զայն . միշտ աչքիս առջեւ
կուգար եւ կը կարմրէի անոր տեղ ես երջանիկ
ըլլալ մտածած ըլլալուս համար : Ինքզինքիս
չէի ներեր այս գրեթէ եղեւնական յոյսը ունեւ
նալուս , յոյս մը՝ որուն կառչած էր հոգիս իս-
կոյն եւ սակայն չէի կրնար ստիպել ինքզինքս
որ սիրաս զոհեմ իրեն համար , որովհետեւ
վերջապէս կըզգայի թէ կը սիրէի Ռօպէռը : Եւ
ի՛նչ սէրով : Միտքս կը բերէի մէկիկ մէկիկ
անոր գալէն ի վեր մեր իրարու հետ անցու-
ցած ժամերը , քայլ առ քայլ . հետեւելով
Լուիզի որ ապացոյցներ կը մնտաէր , նշաններ
կը գուշակէր ուզելով համոզել զիս թէ ինքը
ինձմէ աւելի կը սիրէր զայն : Կը յիշէի Ռօ-
պէռի սա բառերը որոնք զարմացուցած էին
զիս . — «Տղայ է անիկայ , այդ տարիքին
մէջ կրնայ սիրել» . — Բայց չէի կրնար հա-
մուտել զիւրաւ . շատ աղէկ կը ճանչնայի
Լուիզի փափուկ եւ տկար բնասորութիւնը ,
իր խորունկ դիւրագգածութիւնը որ յաճախ ,
աննշան բաներու համար , վախցուցած էր
մեզ , եւ բոլոր ասոնց մտածելով , այրող ար-
ցունքներ գոց . արտեւանունքներէս վար կը
սահէին :

Նոյն պահուն , թեթեւ շունչ մը անցաւ
ճակարի վրայէն : Աչքերս բացի եւ տեսայ
Լուիզը որ ծռած էր վրաս . — Ի՞նչ ունիս
նայիմ . . . կուլած կոր , ըսաւ ինծի , հոգած ու
իրարանցումով մը . հիօւանդ ես . . . վիճա
մը ունիս . . .

— Բան մը չի կայ , պատասխանեցի ջա-
նալով ժպտիլ : Քեզի կը մտածէի , ալուսոր
Լուիզս . . . գիտե՞ս որ քիչ օրէն պէտք
պիտի ըլլայ զատուիլ . . . նոր զգացում մը
պատճառ պիտի ըլլայ որ մեր կեանքը բաժ-
նենք մեր սիրտերուն պէս . . .

— Լո՛ւէ՛ , չա՛ր աղջիկ , գոչեց աշխուժով ,
կրնա՞մ առանց քեզի ապրիլ , առանց քեզ
սիրելու , առանց մտածումներս քեզի հազոր-
դելու ապրիլ . . . Ապերա՛խտ , ասե՞նք
գտար այսքան ծանր խօսքեր ըսելու ինծի . . .
Տե՛ս , քեզի հորսնութեանս նուէրը բերի . . .

Եւ ձեռքերուս մէջ դրաւ թղթերու ծրար
մը զոր առի մեքենարար : Իր խօսքերուն
ամէն մէկը , իր զուարթ ու վստահ գէմքը կը
խօցէին սիրտս : — Եթէ երջանկութիւնը ձեռ-

քէն առնեմ , կըսէի ինքնին , ո՞վ պիտի միտ-
թարէ զինքը : Լուիզ , առանց գուշակելու
մտածումներուն դառնութիւնը , երկու ձեռ-
քերս բռնեց իսկոյն .

— Մտիկ ըրէ՛ , շարունակեց իր ալուսոր
ժպտովը : Կը յիշես սա մութ գոյնով տնա-
կը , շագանակենիներու տակ պահուած եւ
եղրեւանիներով ծածկուած տունը որուն հա-
մար խենդ եղեր էիր գիւղը եղած ատենդ . . .

— Այո՛ . . . ըսի , աչքիս առջեւն է դեռ :

— Եւ անասոր որ անոր չուրջը տարած-
ուած է , գետակը որ տեղ տեղ կանհետանայ
ճամուռն մէջ . . .

— Այո՛ , կը յիշեմ . . . սիրած էի այդ
տնակին տխուր եւ քաշուած տեսքը . . .

— Է՛հ ուրեմն , գոչեց Լուիզ ձեռքերուս
զարնելով զուարթօրէն . . . քու սիրած տունդ ,
ահաւաստիկ , այս թուղթերուն մէջն է : Քեզի
տուի զայն իր պզտիկ պարտէզովը որ քու
սիրտդ առաւ . . . հայրս տիրա՛ջը գիմեց եւ
ա՛ն ալ հաւանեցաւ ծախելու . . . Ի՞նչ պիտի
ընէր այդ երազներու ճշմարիտ բոյնը . . .
մեզի պէս երազկոտ գլուխներու համար է
անիկա . . . Ի՛նչ երջանկութիւն , անա՞նկ չէ :
Ռօպէռին հետ պիտի գանք քեզի այցելել հո՞ն
Մեզի պէտք եղած պատիւները պիտի ընէք ,
օրիորդ . . . իշխանուհիի մը պէս որուն կը
նմանիք արդէն . . . ա՛հ , կ'ուզէի ամուսնա-
ցած ըլլալ արդէն : — Եւ գիտե՞ս , աւելցուց
մօբերմօրէն , կարծեմ թէ շատ չի պիտի ու-
շանայ ամուսնութիւնս , հայրս երէկ ըսաւ
ինծի թէ կը փափաքէր որ ամուսնունէ առաջ
ըլլայ ըմբոս . . .

Անկողնիս վրայ տարածուած թուղթերը
ճմրթկեցի :

— Օ՛հ , ամէն բան կարգին է , շարունա-
կեց , կարծելով որ կարգալու համար կը ժող-
վեմ զանոնք . . . ահա այդ տանը կուլ-
ուած առգիրները . . . համարե՛ք զիս , Մատ-
էն . . . Ըսէ՛ ինծի թէ ուրախ ես տոնցմով . . .
Ըսէ՛ թէ կը սիրես զիս . . . օ՛հ , ես , կը պաշ-
տեմ քեզի . . . տե՛ս , կ'ուզեմ որ երջանիկ ըլ-
լաւ դուն ալ ինծի պէս . . .

Իր սիրուն գլուխը կտրծքիս վրայ սեղ-
մեցի լալով , բայց այս անգամ արցունքներս
չի կասկածեցուցին զինքը . . . ուրախութեանս
կը վերագրէր զանոնք . . .

— Լուի՛զ, ըսի յանկարծ աչքերուն մէջ շնչտակի նայելով, իրր թէ կարողաւ համար մինչեւ իր հոգիին խորը . . . : Գաղափար մը, մտմտութեան մը, բան մը կայ մէջս որ կը չարչարէ զիս . . . պէտք է որ օգնես ինծի այս տառապանքէն մզաւորելու համար : Գիտցիր թէ իմ եւ քու երջանկութեանդ կը վերաբերի ըսելիքս . . . պատասխանելէ առաջ՝ պէտք է խորհիս աղէկ մը . . . :

— Կը վախցնես կոր զիս . . . գոչեց ջանալով խուսարիւ նայուած քէս . . . :

Բայց ուժով մը բռնեցի զինքը :

— Լուի՛զ, յարեցի խիստ ձայնով մը, վըստա՛հ ես թէ կը սիրես Ռօպէ՛սը . . . :

Շուարած մնաց, ուզելով գուշակել թէ ինչ ըսել կ'ուզէի . . . :

— Ինչո՞ւ կը հարցնես ատիկա ինծի . . . չե՞ս գիտեր այդպէս ըլլալը . . . հազար անգամ չըսի՞ք քեզի . . . կը սիրե՞մ մի, օ՛հ, ա՛մբողջ հոգւովս . . . ինչո՞ւ այդ հարցումը, հանդիսաւոր դէմքով մը . . . :

Մտաւորանջութենէն աչքերը բացած՝ կը գիտէր զիս իր կարգին . . . :

— Բա՛ն մը սուսիս ըսելիք . . . խօսէ՛ . . . հիւանդ ես . . . բա՛ն մը կայ որ գիտես . . . կը կարծես որ Ռօպէ՛սը չսիրէ՞ր զիս . . . :

Ձայնը փոխուած էր. կարծես թէ կը սպասէր իր դատաւճիտին որուն համեմատ կամ պիտի ապրէր, կամ մեռնէր . . . :

— Է՛հ ուրեմն, ըսի հանդարտօրէն, եթէ ըլլայ որ Ռօպէ՛ս ուրիշ մը սիրէ . . . :

Ճիշ մը արձակեց եւ սկսաւ գողալ մեռածի պէս գունատելով :

— Մեռնիր աւելի աղէկ պիտի ըլլար, Մաալէն, թոթովեց խեղճօճի ձայնով եւ անանկ շնչտով մը որ սիրտս ըզբոսեց . . . :

Ձեռքերը միացուց իրարու եւ առանց բառ մը աւելցնելու՝ սոսկումով կը գիտէր զիս . . . :

Չկրցայ զիմանալ այդ նայուածքին :

— Ապահով եղի՛ր, ըսի, կարծքիս վրայ քաշելով զինքը . . . կը տեսնեմ որ կը սիրես Ռօպէ՛սը . . . ներէ՛ հասկածած ըլլալու, քեզի վախցնելու համար . . . : Այո՛, ամէն տարակոյր պէտք է վերջացած ըլլայ, երջանիկ պիտի ըլլաս, Լուի՛զ, գնա՛ հանգստացիր . . . :

Մէկ քանի անգամ գրկեցի զինքը եւ հանդարտեցուցի . . . : Երիտաւարական ինքնավտահուժութիւնը շուտով յաջորդած էր այս անցողական մտաւորանջութեան որուն պատճառ եղած էի : Քիչ վերջը, Լուի՛զ մինակ կը թուուր զիս, արդէն միտթարուած եւ հանդարտ : Մինակ մնալով, զգացի թէ վերջնականապէս կորսուած էի : Ամէն բան հօրեղբորս, նոյն խի Լուի՛զի կը պարտէի, կրնայի յախշտակել անկէ զիս սիրող անձը : — Որովհետեւ, Լուի՛զ կը սիրէ Ռօպէ՛սը, կը մտածէի : — Գիտէի որ զհոգութեան առջեւ կարող չէի տկարանալ, երբոր հասկցայ իմ պարտականութիւնս, առանց վատութեան ընդունեցի զայն : Քաջութեամբ վանեցի բոլոր այն մտածումներս որոնք աւելի զիս տկարացնելու կը ծառայէին եւ վճռարար որոշեցի անկարելին գնել իմ եւ Ռօպէ՛րի մէջտեղ :

Սենեակէս վար իջնելու ժամը յանկարծակիի բերաւ զիս այս խորհրդածութիւններուս մէջ : Տիրութեամբ Լուի՛զի բերած թուղթերը ժողովեցի որոնք գետինը ինկած էին եւ ինքնին ըսի թէ օր մը թերեւս պիտի ըլլար որ պիտի երթայի այդ միայնութեան մէջ թաղել իմ ըմբոստ սիրտս, բայց շուտով կրցայ վանել այդ գաղափարը : Հոգիս այնքան ծեծուած էր որ չէի կարծիք թէ վիշտը կրնար ընկճել զիս : Կ'ուզէի ժամ առաջ տեսնել Ռօպէ՛սը՝ վերջնականապէս որոշելու համար ճակատագիրս : Ընելիք զոհողութեանս ցաւը գրեթէ կ'անհետանար պարտականութեանս մեծութեանը առջեւ :

(Շարունակելի)

“ՄԱՍԻՍ”Ի ՆԱՄԱԿԱՏՈՒՓԸ

Մ. Դ. (Այնթապ) — Գանձեցիք, Թեւ ըստանորդագրութիւննիդ նոյեմբ. 1էն կը սկսի, բայց 42 քիւ Մասիսէն ղրկել սկսանք՝ քերթօնին սկզբնաւորութիւնն ալ տալու համար :

Յ. Լ. (Սեփե) — Նոյնպէս քիւ 42է ղրկել սկսանք ձեր յանձնարարած Մասիսի Բաժանորդագիրը կրնաք ղրկել նամակաղրողմով կամ մանուս—քօսքով :

Արժօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻԺԵՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսըլար եօգուշու, Թիւ 27

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՅ, ԹԻՒ 200

Կալաթա-Սերայի Լիսեին դեմ

Ամեն օր ժամը 5—11 (Ը. Թ.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻՒ 10

Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ՝ կը դարմանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով ստամոքսի, աղիւսց, միզական ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տխրութիւնները, գաղիական ախտերը (սիֆիլիս եւլն) եւ մորթի հիւանդութիւնները :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը :

ԸՆՏԻՐ, ՀՈՏԱԻԷՏ, ԽՆԱՅՈՂԱԿԱՆ

ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ



ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ

Ամէն տեսակ թէյերու նոր բերքերէն մեծ քանակութեամբ հասած է ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը : Թէյի սիրահարներն ու ամէնէն փափկաճաշակներն իսկ վերջին ծայր գոհ պիտի մնան այս թարմ թէյերէն, որոնք ընտիր առողջապահիկ եւ հոտաւէտ բլլալով հանդերձ անմրցելի ըսուելու աստիճան առան են :

Գաւառներու յաճախորդք թէյ գնելու համար պէտք չունին անձամբ գալու, նամաւ

կով թող դիմեն ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատան, ուր ամենամեծ խնամով, զգուշաւորութեամբ կ'ը գործադրուին ամէն կարգի յանձնարարութիւնք՝ մեծաքանակ եւ փոքրաքանակ : Դիւրութեան համար՝ թէյերուն փոխարէնը կարելի է վճարել նաեւ երբ ապրանքները բեռնուին ու ֆոնօշիւնքօն ներկայացուի գնողին : Կեղծ թէյ չգնելու համար հաճեցէք ուշադրութիւն ընել վերի մարքային եւ ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ անուանք : Կեդրոնատեղին՝ Կ. Պոլիս, Պահէ Գարու, Ճէլալ Պէյ խանի կից, թիւ 10, Կ. Եաւրուեան Յ. Իսագուլեան մեծ վաճառատունը :

THE GRESHAM

ԿՐԷՇԱՄ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ Ի ԼՈՆՏՈՆ

1848 ԻՆ

Դրամագլուխ եւ երաւխաւորութեան գումար աւելի քան 175,000,000 Ֆրանկ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՔ ԷՏՈՒԸՐՏՍ ԵՒ ՈՐԴԻ

Ալալըմճի խան, Կ. Պոլիս:

ԶՐՈՒՅԱՏՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Անգլիերեն լեզուի (1901)

Ի պես վարժարանաց եւ ինքնընտել ուսանողաց

Հայերէնի վերածեց ԴէՌՐԴ Թ. ԿԻԼԵԱՆ

Սոյն քերականութեան մէջ հարթուած են անգլիերէն լեզուի բոլոր դժուարութիւնները : Ամէն անոնք որ կր փափագին ՍՈՒՂ Ժամանակի մէջ սորվիլ եւ ՈՒՂԻՂ սորվիլ անգլիերէն լեզուն , թո՛ղ անգամ մը փորձեն սոյն դասագիրքը :

Դիմել Թ. Սրապեան Դրատուն ,

ՄԱՐԶՈՒԱՆ

եւ կամ հրատարակչին՝ Herrn Julius Gross,
Verlagsbuchhändler,
HEIDELBERG.

(Allemagne)

եւ կամ Պ. Պալենց Դրատունը

Զաքմազճրար , Թիւ 20,

5—8

Կ. ՊՈԼԻՍ

ՄԱՆՁԵՐՈՒ ԹՇՆԱՄԻՆ

Գրեց ՏՈՔԹ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ամէն դաստիարակի եւ ծնողքի խորհրդատու հատոր մը՝ ընդդէմ պատանեկան մուլտիթեան :

Գին 5 դանեկան

2—5

Գ. ՊԱՂՏԱՍՍՐԵԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԾ ԳՈՐԾԵՐԸ

ԿԵԱՆՔ ՏԵՐ ԹԻՍՈՒՄԻ, ըստ չորից Աւետարանաց. — Պատկերազարդ 3 զր2.

ԿԵԱՆՔ ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՑ. — Պատկերազարդ 5

ՄԱՅՐԻԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ. — Տըք. Ա. Է. Սէլլ. (Թարգմ.) 2


ԱՇՆԱՆ ՏԵՐԵԼԵՆԵՐ. — Բ. Տպագրութիւն 4

Կը գտնուի բոլոր հայ գրաւաճառաց քով :

Կեդրոնացեղի

Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՆ

Զաքմաքճրար , Թիւ 20



Ս Ի Ն Կ Է Ր

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին միմյայե Սինկեր Ընկերութեան վաճառա-
տանց մէջ՝

ԿԱԼԱԹԱ { 1. Սինկէր լսան , Թիւնէլին ետեւը .
2. Գարաքէօյ , Թրամպէյին կայարանին Դիմաց .

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ .
2. Սուլթան Պէյազիտ .

Դասերը եւ ցորոգութիւնք ձրի .

ԿԱՏԱՐԵԱՅ ԵՐԱՇԽԱՄ ՈՐՈՒԹԻՒՆ

Մասնանիւղեր գաւառաց բոլոր Բաղաբներուն մէջ

ՀԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ



Ա. ԳՍ. ՀՈՎ. Ա. ԳՐԱ. ԿԱՆ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագիւններ

34,775,642 *Фруан, р*

Երաշխաւորութեան գումար

121,765,333

1881-ին ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000

Կեղրոնասեղի, Ղալաթիոյ փարսիին վրայ, Մաֆասան հին տեղը

ՀԱՊԻ. ՔԱՆԻՏ

ՀԱՅԻ. ԳՈՐԾԱԿԱՂ
ԲԷՈՏՈՐ ՌԷԲԵԷՆ

ሀ. ረኮሮሆኮከደ

ԿԻՆՆ ԻՔՐԵԻ ՕՐԻՈՐԴ

Թարգմանութիւն Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆԻ 430 էջ

Բնախօս-ըմբիշը Հափահաս օրիորդաց Ֆիզիքական եւ բարոյական զարգացումը ինքնակրթութեամբ կարելի ընելու համար պատրաստած է այս գիրքը, որ իր հայերէնի թարգմանութեամբը կոչուած է զգալի պակաս մը լեցնել մեր գրական հրապարակին բնախօս-անողջապահական աշխատասիրութեանց ցանցաւ շարքին մէջ :

ՅԱՆՁՆԱԲԱՐԵԼԻ Է ԱՅՍ ԳԻՐԲԸ ԱՄԷՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ :

Կեդրոնացեղին է՝

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը, Ֆիննանըլար, Կ. Պոլիս :

Կը գտնուի Կ. Պոլսոյ եւ Գաւառաց բոլոր գրավաճառներուն քով :

Թղթակագ 10, Լաթակագ 15, Ոսկեգոծ 20 դահեկան :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ

1902

Համառոտ 1 Դր.:

Ընդարձակ 3 Դր.:

ՀԱՄԱՌՕՏ. — Պարզ Օրացոյցէն զատ, կը պարունակէ նաեւ վիճակագրական, թղթատարական ու հեռագրական ընդարձակ տեղեկութիւններ :

ԸՆԴԱՐՁԱԿ. — Այս Օրացոյցը չհինար, ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ գրքոյի մըն է, ՄԻՇՏ ՕԳՏԱԿԱՐ. Տօմարական եւ վիճակագրական գիտելիքներէ զատ, ճիշտ ու ընդարձակ Յաւելում մըն ունի, որուն մէկ մասը թրքախօս ազգայնոց բաժինն է : Կանանց, Արանց, Մոռաց յատուկ հրահանգներէ զատ, կը պարունակէ Բարոյավէպեր, Առողջապահական Քերական մը, Երկրագործական, Բժշկական, Պատմական, Գիտական տեղեկութիւններ, Հետաքրքրաշարժ Հարցարան մը, Զուարճալիք, Թուարանական, Գիտական Հանելուկ, եւայլն, եւայլն, եւայլն :

Կեդրոնացեղին

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Թղթավաճառանոցը

Ֆիննանըլար Եօգուու, Թիւ 27

Կը գտնուի նաեւ Պոլսոյ եւ Գաւառաց բոլոր Գրավաճառներուն քով :